

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ 1981—1982 թթ. ԴԱՇՏԱՅԻՆ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԹԵԶԻՍՆԵՐ
21—23 մարտի 1983 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1983

502/904 (479,25)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՅԱԿԻՑՈՒԹԵԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՈՐԾՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ 1981-1982 թթ. ԴԱՇՏԱՅԻՆ
ՀՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԱԿԱՆ ԸՆՏԱՌԶԱՆ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԹԵԶԻՄՆԵՐԻ

21-23 մարտի 1983 թ.

A 65294



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀԱՏԱԿԱԳՈՒԹԵՐՈՒՆ

T R U S T

1983

Редактор: Б.Н.АРАКЕЛЯН

НАУЧНАЯ СЕССИЯ
ПОСВЯЩЕННАЯ ИТОГАМ ПОЛЕВЫХ АРХЕОЛОГИ-
ЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ В АРМЯНСКОЙ ССР

/1981 - 1982 гг./

(21 - 23 марта 1983 г.)

ТЕЗИСЫ ДОКЛАДОВ
(на армянском языке)

© Издательство АН Армянской ССР, 1983

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

Հ.Վ. ԻԱՆԶԱՂՅԱՆ, Ա.Ծ. ԿԵՎՈՒԹՅԱՆ,
Վ.Կ. ԶԻՆՅԻՌՅԱՆ

ՔԱՐԱՐԱՄԲԻ ԴԱՄԱՐԱՄԴԱՆՑԸ

1. Քարաշամբ հուշարձանը գտնվում է Նախիկի շրջանում, Երևանից
30 կմ հյուսիս, Հրազդան գետի աջ, բարձրադիր հրվանդանի վրա:

Կիկլոպյան պարիսպներով պաշտպանված բնակատեղին սկսած մ.թ.ա.
3-րդ հազարամյակից մինչև ուշ միջնադար, համարյա անընդհատ, հան-
գըրվան է հանդիսացել Քարաշամբի բազմաթիվ սերունդների համար: Այս-
տեղ առաջացել է նաև տարբեր ժամանակների հսկայական դամբարանադաշտ:

2. Բնակատեղիի հարավային կողմի պարսպից դուրս՝ 1982 թ. պեղ-
վել է մոտ 30 մ² մակերես ընդգրկող քարակերտ մի շինություն: Սակա-
վաթիվ լուսացնելու հեկորները հավաստում են նրա վաղ երկաթի դարաշրջա-
նին պատկանելը:

3. Մոտ 70 հա մակերես զբաղեցնող դամբարանադաշտի երկու հատ-
վածներում 1982 թ. ապրիլ-նոյեմբեր ամիսներին պեղվել են 510 դամ-
բարաններ: Դիանք կրոմլեխներ են, սալածածկ հիմնահողային թաղումնե-
րով, որոնց մեջ մասը հնում կողոպտվել է: Հայտնաբերված հիմնական
նյութը՝ լուսացնելու համար առաջնային մետաղից և բարից զարդեր,
զենքեր:

4. Դամբարանադաշտի 1-ին տեղամասում, որը ծավալվում է նրա
ծայրամասում, Հրազդան գետին զուգահեռ, պեղվել են մոտ 160, մանր
քարերով շարված փոքր և բավական խիստ դասավորված կրոմլեխներ, շար-
քային աղքատիկ թաղումներով:

5. Դամբարանադաշտի 2-րդ տեղամասում /հարավարևելյան հատված/,
հիմնականում պեղվել են մի շարք դամբարանախմբեր, կենտրոնական մեջ
կրոմլեխով, շուրջը համախմբված մանր կրոմլեխներով: Գնայած մեջ
դամբարանները նույնպես կողոպտված են, սակայն կենտրոնական դիրքը,
չափերը, քարերի մեջությունը հուշում են վերջիններիս ավագանուն
պատկանելը:

6. Քարաշամբի նյութերը բազմաթիվ գուգահեռներ ունեն և թվագըր-վում են միջին բրոնզից մինչև վաղ երկաթի դարաշրջան ընկած ժամանակատվածով։ Գնայած բնակատեղին դեռևս պեղված է, սակայն մեծածավալ դամբարանադաշտի ուսումնասիրությունը հավաստում է, որ հատկապես ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում քարաշամբը Հայկական լեռնաշխարհի նշանավոր բնակատեղիներից մեկն է հանդիսացել, ունեցել է բավական խիտ բնակչություն, առետրական և մշակութային կապերի մեջ է եղել նաև արտաքին աշխարհի հետ։

Ս.Ա. ԵՍԱԹՄՆ

ՕԸԱԿԱՆԻ 1981-1982 թթ. ՊԵՂԻՄՆԵՐԸ

ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը 1981-1982 թթ. շարունակել է ուրարտական պալատական շինությունների պեղումները Հայկական ՍՍՀ Աշտարակի շրջանի Օշական գյուղում։

Օշականի պալատական շինությունները կառուցվել են մ.թ.ա. 7-րդ դարում և պարզ ել են մ.թ.ա. 6-րդ դարի սկզբներին, վերականգնվել են մ.թ.ա. 6-րդ դարին և վերջնականացես կործանվել՝ մ.թ.ա. 5-րդ դարին։

1981 թ. պեղվել են երկու կացարաններ /թթ 22 և 25/, թթ 25 կացարանը խոշոր սյունասրահ է /8 սյուներով/ և 3 մուտքերով։ Առևտքերից գլխավորը տանում է բակը, իսկ 2 օժանդակ մուտքերը՝ միջանցքով, դեպի այս շինության արևմտյան, իսկ թթ 20 սենյակի միջով՝ դեպի հարավ-արևմտյան հատվածները։

Վերակառուցման ժամանակ, սյունասրահը միջանկյալ պատով բաժանվել է երկու մասի և դարձել՝ մեհյան, որի մասին են վկայում այստեղ գտնված պաշտամունքային օջախները։

Հման պատկեր է դիտվում և թթ 22 սենյակում, ուր վերակառուցումից հետո, արևմտյան հատվածում, կառուցվել է մի հարթակ /2,57 մ 2,42 մ 0,5 մ/, որի վրա դրվել են երկու կրակարան-օջախներ, որոնք հավաստում են և այս սենյակի մեհյան լինելու հանգամանքը։

1982 թ. բացվեցին 6 կացարաններ /թթ 30-36/, որոնց պեղումներով ավարտվեց երկրորդ պալատական շինության հարավ-արևելյան հատվածի ուսումնասիրությունը։ Միաժամանակ պարզվեց, որ այս կացարանները ուղղված են ու թե հյուսիսից-հարավ, ինչպես նաև դեպի ազգային պատմության մեջացնելով շինության տարածքը։

Պիեղումների շնորհիվ պարզվեց, որ այս կացարանները ինչպես և նախորդ պեղվածները կործանվել են Ուրարտուի անկումից հետո և վերականգնվել՝ մ.թ.ա. 6-րդ դարի կեսերին:

Մ.թ.ա. 6-րդ դարում կատարված շինարարական աշխատանքների ժամանակ, որպես շինանյութ օգտագործվել են նաև ուրարտական արձանները և ֆալուսները: Դա ազացուցվում է թ 33 սենյակի դռան շարվածքում հայտնաբերված խոշոր ֆալուսներով:

Հույն սենյակի պատից թափված քարերի կույտի մեջ գտնվեց խոշոր տուֆե արձան / երկ. 87 սմ, լայն. 51 սմ/, որը պատկերում է ինչ-որ կենդանի, ըստ երևույթին այժ նստած վիճակում: Արձանի գլուխը ջարդված է, ունի երկար վիզ և կարճ պոչ: Վզի տակից ուռութիկ իջնում է ծալված ոտքը: Որքան մեզ հայտնի է այսպիսի արձան ուրարտական քանդակագործության մեջ առաջին անգամն է հանդիպում, չնայած որ ուրարտական կիրառական արվեստում այժը հաճախակի է պատկերվում և ուրարտական սեպագրերում հիշատակություններ կան այն զոհաբերելու մասին:

Այս իրերի հետ միասին գտնվել են նաև մեծ քանակությամբ ուրարտական և վաղ հայկական ժամանակաշրջանների կարմիր անգոբապատճասերի, քրեղանների, փիալաների բեկորներ, ինչպես նաև քարից և ոսկրից պատրաստված առարկաներ:

Ս.Հ. ԴԵԿԵՆՑՅԱՆ

ԱՐԻՒ-ԲԵՐԴԻ ՎԱՂ ԵՎԿԱԹԵԴԱՐԾԱՆ ԴԱՄԲԱՐԱԾՈՒՅՆԵՐԸ

Հայաստանում, վաղ երկաթի դարաշրջանին պատկանող դամբարաններից մեծ հետաքրքրություն են ներկայացնում ավագանու հարուստ դամբարանները: Այդպիսի դամբարաններ են հայտնաբերվել Մեծամորում, Շիրակավանում և Լոռի-Բերդում:

1980 թ. Լոռի-Բերդում պեղված թ 29 և թ 30 դամբարանները նշված ժամանակաշրջանի շատ բնորոշ հուշարձաններից են: Դրանք արտաքին շրջանակը կրոմը եխներ ունեն և խորը հիմնառողային փոսեր, որոնք ծածկված են հսկայական սալ քարերով: Այս դամբարանների հատակի մի հատվածը սալապատ է, նկատվում են փայտե պատգարակի կամ տախտակամածի հետքեր, ինչպես նաև կարմիր օխրայի մնացորդներ: Երկու դամբարաններում էլ կատարված է դիաբաղում:

Մեծաքանակ են բրոնզե իրերը, որոնք զենքեր են, աշխատանքի գործիքներ, սանձեր, ձիասարքի մասեր: Հայտնաբերվել են նաև ոսկե զարդեր և երկաթե ապարանջաններ:

Ուշագրավ են ոսկեփայլ ու արծաթափայլ բրոնզի - համադրությամբ
պատրաստված իրերը, որոնք մինչև այժմ հայտնի էին միայն Հայաստան
Ղարաբաղի մեջ դամբանաբերություններից:

Ուշագրավ է № 29 դամբարանի հատակի մեջ բացված թաքստոցը, որ-
տեղ գանձի ձևով պահպան են մի շարք բրոնզե առարկաներ:

Խեցել ենի մի մասը ծիսական բնույթ ունի, առանձնանում է հատ-
կապես վերադիր գորտերով և օւերով զարդարված կարասիկը, կապված
չը ու տարերքի պաշտամունքի հետ:

Եւնելով հիշյալ դամբարաններում հայտնաբերված նյութական մշա-
կույթի առարկաների համեմատական ուսումնասիրությունից, այս հու-
շարձանները կարելի են թվագրել մ.թ.ա. 11-9-րդ դարերով:

Գ. Ե. ԱՐԵՎԱՆ

ՀԱԳԻՏԱԿՄԱՆ ԱՂԹՈՒՐՆԵՐՈՒՄ ՄԱԿՈՒԹՅԱՇԻՆ ԵՎ ԸԹԸՆԻԿԱԿԱՆ ՓՈԽՎԶԴՂԵՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԾՈՎՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

1. Հնագիտական աշխատություններում աշխարհագրական տարբեր ռե-
գիոններից հայտնաբերված միևնույն գտածոների նմանությունը հաճա-
խակի բացատրվում է տարբեր, անգամ իրարամերժ պատմական գործոննե-
րով՝ համանման միջավայրերում մշակույթների համաստիճան կամ հարա-
մետ զարգացմամբ, փոխազդեցություններով ու փոխառություններով,
գաղթերով, առևտրական փոխանակությամբ, պատերազմական ավարառությամբ,
դիֆուզիաներով, ավանդույթների միասնականությամբ, մշակույթի մաս-
նանշատմամբ, պատմա-մշակութային ռեգիոնի ընդհանրությամբ, էթնիկա-
կան տեղաշարժերով և ազգակցությամբ, և վերջապես պատահական համ-
ընկման միջոցով։ Այսպիսի ամենատարբեր պատճառներով յուրաքանչյուր
փաստի բացատրության հնարավորությունը բացասում է իրապես գիտական
բացատրությունը։ Այս վիճակը ծագում է հիմնականում երկու պատճառ-
ներից։ ա/ բացակայում է մշակութային փոխազդեցության 0րինաչափու-
թյունների հնագիտական աղբյուրներում արտացոլման տեսական հիմնա-
վորումը, բ/ եզրակացությունները սովորաբար հիմնվում են ժամանակա-
գրական-տարածական սահմանափակ տվյալների վրա, այսինքն՝ ուսումնա-
սիրվող նյութը անբավար է լինում։

2. Տիպաբանական զուգահեռականության էությունը մշակութային
և էթնիկական փոխազդեցության հնագիտական ուսումնասիրության հիմքն
է։ Այս իմաստով կարևոր է ընդհանրություն ունեցող արտեֆակտային
տարրերի /հատկանիշների/ և հնագիտական տիպերի առանձնացված քննու-

թյունը : Տարբեր ռեգիստրում զւգահեռ արտեֆակտային տարրեր հանդես են եկել ոչ միայն մշակութային փոխկապվածության, այլև ավելի հաճախ՝ համանման բնական և սոցիոմշակութային միջավայրերում դրսեվորվող իզոֆունկցիոնալ գործուների ազդեցության հետևանքով : Ի հակառակություն դրա, զուգահեռ հնագիտական տիպերի անկախ առաջացման հնարավորությունը շատ ավելի փոքր է : Այսպիսով, մշակութային և էթնիկական փոխազդեցությունների հնագիտական ուսումնասիրությունը պետք է սկսել զուգահեռ տարրերի և տիպերի առանձնացման եղանակով : Անհրաժեշտ է ենթադրել զուգահեռ տիպերի միակենտրոն ծագումը :

3. Ուսումնասիրության հաջորդ փուլում անհրաժեշտ է դառնում մշակութային փոխազդեցությունների ազգագրական մոդելների կիրառումը : Առանձնանում են մշակութային երեսույթների տեղափոխության երկու եղանակներ, որոնք ընդգրկում են տեղաշարժի կոնկրետ բոլոր դըրսեկումները . ա/մշակութային երեսույթը տեղափոխվում է իր կրողի հետ /գաղթային տեղափոխություն/, բ/մշակութային երեսույթը փոխանցվում է մեկ կրողից մյուսին /միջկրողական տեղափոխություն/ : Վերջինս ընդգրկում է նաև մշակութային երեսույթների փոխանակման բոլոր ձևերը :

4. Մշակութային երեսույթների գաղթային տեղափոխությունը և, հետևաբար, նրանց կրողների գաղթերը բացահայտելու նպատակով առաջադրվել են մի քանի չափանիշեր : Առավելապես ընդունված է համեմատվող հնագիտական մշակութային մասնի չափանիշը , , /Ձ. Դիցի տերմին/ : Սակայն նրա իրական լինելը չի հաստատվում գրավոր աղբյուրներում հիշատակված գաղթերը արտացոլող հնագիտական փաստերի ինչպես և գաղթերի մասին ազգագրական տվյալների քննությամբ : Գաղթերը բացահայտելու համար բավականացնում են երկու չափանիշեր՝ ա/ հնագիտական տիպերի տարածական-ժամանակագրական հպվածության հնագիտական կովանը, բ/ այդ տիպերի անմիջկրողականության պատմա-ազգագրական կովանը :

5. Նշված տեսական հիմքերը հնարավորություն են տալիս նորովի վերլուծելու հայկական լեռնաշխարհի և այլ ռեգիստրատորի մշակութային և էթնիկական հնագույն կապերը : Պարզվում է, որ մ.թ.ա. Յ-րդ հազարմյակի երկրորդ քառորդում Ասորիքում և Պաղեստինում քիրքետկերական մշակութիւնի տարածումը պայմանավորված էր Հայկական լեռնաշխարհից էթնիկական զգալի զանգվածների արտագաղթով : Նույն հազարմյակի երկրորդ և երրորդ քառորդներում Հյուսիսային Բալկաններից և Արևմտյան ֆոքր Ասիայից գաղթած էթնիկական խմբերը թափանցում

Են Հայկական լեռնաշխարհ։ Հայաստանի միջինքրոնզեղարյան հնագիտական մշակույթների /մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսը/ և, մասնավորապես թռեղթ-կիրովականյան մշակույթի վերլուծությունը բացահայտում է մշակութային երեսույթների հիմնականում մեկ կրողից մյուսին փոխանցմամբ։ Ուշ բրոնզե և վաղ երկարեղարի նյութերի հետագոտությունը ներկայացնում է մշակութային երեսույթների ինչպես միջկրողական, այդպես էլ գաղթային տեղափոխություններ։ Այդ դարաշրջանում Հեն բացաւմ գաղթերը Հայկական լեռնաշխարհից դեպի Արևմտյան ֆոքր Ասիա և հակառակ ուղղությամբ։ Ուրարտական պետության ծաղկման շրջանում Հայկական լեռնաշխարհի, ֆոքր Ասիայի և Միջերկրականի ավագանի մշակութային կապերը հիմնականում միջկրողական բնույթ են ունեցել։

Հ.Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔԵԹԻԻ ԿԻԿԱՐԱՅԱՆ ԱՄՐՈՒԻ ՊԵՂՈՒՅԵՐԸ

/1973-74 և 1982 թթ./

1. Զույգ ամրություններից բաղկացած հեթի կիկլոպյան ամրոցը գտնվում է Ախուրյանի շրջանի հեթի գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերեսու յթից 2000 մ բարձրության վրա։ Այն տեղավորված է Շիրակի լեռնաշղթայի „Աղնախներ“, կոչվող երկու բարձունքների գագաթներին։

Հարավարևելյանը փոքր է, զբաղեցնում է 600 քառ.մ տարածություն և մյուսից բաժանված է թամբառներությամբ։ Հյուսիս-արևմտյանը՝ միջնաբերդը ավելի ընդարձակ է և ունի 1,2 հա տարածություն։ Ամրությունները շրջափակված են պարիսպներով և ունեն բլուրների եզրագծերին համապատասխան հատակիծ։ Այս երկու կառույցները ներառնված են մեկ ընդհանուր պարսպապատի մեջ, որը ընդգրկում է մոտ 7 հեկտար տարածություն։ Միջնաբերդն ունի երկու մուտք, որոնք պաշտպանված են երկուական քառանկյունաձև հղոր աշտարակներով։

Ամրոցի պատերը շարված են ճեղքված որձաքարերի երկու շարքով, որոնց արանքում լցված են մանր քարաբեկորներ։ Ամրիսպները ունեն 1,8 մ լայնություն։

2. Միջնաբերդում պեղված մոտ 200 քառ. մ տարածությունում բացվել են երեք կացարանից բաղկացած մի շենք և 4 առանձին կացարաններ, որոնց քարաշեն պատերը միաշար են կամ երկշար։ Քառանկյունի երբեմն նաև կլորացող անկյուններով կացարաններն ունեն 0,8 - 1 մ դրանքացվածք։ Կացարաններում առկա են ինչպես պաշտամունքային անկյուն-

ներ, կուռքեր, այնպես էլ տնտեսական օջախներ, նստարաններ:

Յ. Ա. Եղումներով հայտաբերված քարե ու ոսկրե աշխատանքային գործիքների և լսեցեղեն արտադրանքի նմուշների համեմատական ուսումնասիրությամբ պարզվում է, որ ամրոցը հիմնադրվել է մ.թ.ա. 10-5-րդ դարերում, որտեղ կյանքը հարատեել է մինչև մ.թ.ա. 6-4-րդ դարերը:

Ա. Ս. ՓԻԼԻՊՈՂԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՐԵՐՎԱԾԸ , ,ԱԽԱՋԱԿՈՒՄՍԻԱԿԱՆ,,
ՏԻՐԻ ԴԱՇՈՒՅՆԵԼՈՒ ՈՒ ՄՐԵՐԸ

Միջին բրոնզի - վաղ երկարի ժամանակաշրջանում հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղախմբերի և առաջավորասիական երկրների միջև եղած կապերի մասին հնագիտական որոշակի նյութի հետ մեկտեղ վկայում են նաև առաջավորասիական տիպի դաշույններն ու սրերը:

Ուղիղ, միաձույլ, երբեմն լայնացող գլխով մետաղյա կոթառը, որկասսոն և փայտե կամ ոսկրե ներդիրների համար կոթառի վրա արված երիզները, զատում են այս զենքը դաշույնների ու սրերի մյուս տիպերից:

Առաջավորասիական դաշույններն ու սրերը շատ լայն տարածում ունեն և հանդիպում են Հին Արևելքի համարյա բուլոր շրջաններում, սկսած իրանական սարահարթից մինչև Հգեյան կղզիները, Եգիպտոսից՝ Հյուսիսային կովկաս: Այս զենքի առավել վաղ Օրինակները մ.թ.ա. 2-րդ հազ. սկզբին հանդես են գալիս Արևելյան Միջերկրայի շրջանում, ապա մ.թ.ա. 2-րդ հազարամյակի ընթացքում տարածվում ողջ Արածագոր Ասիայում:

Հայաստանի տարածքում հայտնաբերված առաջավորասիական դաշույնների ու սրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք միատիպ չեն, բաժանվում են երեք հիմնական խմբի և կապվում են Արածագոր Ասիայի որոշակի շրջանների հետ: Արածին խմբի մեջ մտնում են Հառիճիթ և ֆրանգանոցից հայտնաբերված Օրինակները: Այս դաշույնները իրենց ձեռվ ավելի մոտ են Արևելյան Միջերկրայի շրջան մ.թ.ա. 17-15-րդ պատրաստված զենքին, թեև իրենց վրա կրում են տեղական արտադրության որոշ մանրամասներ:

Հայաստանի տարածքում հայտնաբերված առաջավորասիական զենքի երկրորդ խումբը կազմում են Արեիկից, Ալավերդուց, Շիրակավանից և Վերին Հավերից հայտնաբերվածները: Այս խմբի համար ամենամոտ զուգահեռները գտնում ենք իրանական զենքերի շարքում, որը վկայում է

ուշ բրոնզի ժամանակաշրջանում իրանական սարահարթում և Հայկական լեռնաշխարհում բնակվող տեղակամբերի միջև եղած մշակութային կապերի մասին։ Մեր կարծիքով, սակայն, Հի կարելի խոսել նշված գենքի իրանից /ավելի ստույգ Լուրիստանից/ դեպի Հայաստան կատարված ուղղակի ներմուծման մասին, քանի որ ձևերի որոշակի ընդհանրության հետ մեկտեղ, առկա են նաև Նկատելի տարբերություններ, որոնք զատում են Հայաստանում հայտնաբերված նույնատիպ դաշույններն ու սրերը լուրիստանյան գենքից։ Այս խմբին պատկանող Օրինակները հիմնականում թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսով։

Հայաստանի տարածքում հայտնաբերված առաջավորասիական դաշույնների երրորդ խումբը կազմում են կարմիր Վանքի և Կջմիածնի Օրինակները։ Այս խմբի մեջ մտնող դաշույնները հիմնականում կապվում են ասսուրական գենքի հետ, շատ լայն տարածում են ստացել Անդրկովկասում և Հայաստանից զատ հանդիպում են նաև Վրաստանում, Աղբքաջանում, Հյուսիսային և Հարավային Օսեբիայում և Դաղստանում։ Թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջով և 1-ին հազարամյակի սկզբներով։

Այսպիսով, Հայաստանում հայտնաբերված առաջավորասիական դաշույնների ու սրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նըրանք այստեղ հանդես են եկել արդեն մ.թ.ա. 2-րդ հազ. 1-ին կեսին և գոյատել մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբները։ Ընդ որում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին Հայաստանում գերակշռել են արևելամիջերկրածովյան Օրինակները, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին Հայկական լեռնաշխարհի և իրանական բարերավանդակի արևմտյան և հյուսիսարևմտյան շրջաններին բնորոշ դաշույններն ու սրերը, իսկ մ.թ.ա. 1-ին հազարամյակի առաջին դարերից տարածում է ստացել ասսուրական արտադրության գենքը։

Տեղական գենքին բնորոշ առանձնահատկությունների առկայությունը և ձևերի բազմազանությունը գալիս է հաստատելու, որ առաջավորասիական դաշույններն ու սրերը միայն ուղղակի ներմուծման արդյունք չեն հանդիսացել։ Նրանք արտադրվել են նաև Հայաստանում, և տարածվել ու միայն Անդրկովկասում, այլև արտահանվել կենտրոնական և հյուսիսային կովկաս։

ՀԵՏԱԿՈՒԶԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԲՈՒՄԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ
ԾԱՂԿԱՇԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ

ՀՍՍՀ ԿԱՆ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ազգագրության ինստիտուտի հետախուզական ջոկատը 1982 թ. պեղումներ կատարեց Հաղբատից 8 կմ արևելք գտնվող Ծաղկաշատ գյուղի շրջակայքում։ Բացված երեք դամբարանները գտնվում էին գյուղից 4 կմ հարավարևելք ընկած տեղացիների կողմից „,հաշալ թափա,, անվանվող վայրում։

Պիեղված դամբարանները հարավարևելքից հյուսիսարևմուտք ուղղված սալարկղներ են, որոնցից մեկը /Բ 2/ սալով բաժանված է երկու մասի։ Դամբարանները կառուցված են ու ճածկված 5-7 սմ հաստության բազալտե սալերով։ Բացառություն է կազմում ճածկասալերից մեկը, որի հաստությունը հասնում է 10-12 սմ։ Պիեղումները տվեցին հետևյալ պատկերը։ Դամբարան Բ 1 - Դամբարանի վրա՝ ճածկասալի երկու կողմերում դրված էին միականթ կճուճ և սափոր, իսկ դամբարանիցում երդ կու գավաթ, թաս, երեք ապարանջան, երկու կճուճ և մեկ քունքազարդ։ Գլխով արևմուտք պառկեցված կմախքից բացակայում էին առանձին մասեր։

Դամբարան Բ 2 - Ծածկասալի մոտ դրված քարի վրա գտնվեցին թաս, կճուճ և գավաթ, իսկ դամբարանում, գանգի ետևում՝ սափոր, կճուճ և քրեղան։ Կողքի դամբարանիցում հայտնաբերվեցին երկու գավաթ, դանակի բեկոր և երկու ապարանջան։ Երկու դամբարանից երդ, գլխով արևմուտք ուղղված կմախքներից բացակայում էին առանձին մասեր։

Դամբարան Բ 3 - կմախք չկար։ Դամբարանից դուրս, պատի մոտ, գտնվեց նիզակ, իսկ դամբարանիցում կարասի, գավաթների և նիզակի բեկորներ էին ընկած։

Հայտնաբերված նյութերը համաժամանակյա են։

Զենքեր։ ա/ Նիզակները պատրաստված են երկաթից և պատկանում են խոշովակալութառ տեսակին։

բ/ Պիերճանքի առարկաներ։ Բրոնզյա կոճակները կոնաձև են, ունեն կամրջակներ ամրացնելու համար, իսկ քունքազարդը շրջանաձև ոլորած բրոնզյա լար է կենտրոնով իջնող օճագալար զարդով։ Ապարանջանները բրոնզից են, մոտեցող և վրա բերված ծայրերով, մի մասի մակերեսին արված են փորագիր գծազարդեր։

գ/ Խեցեղ են։ Տարբեր տեսակների անոթներն ունեն սև, գորշ, դարչնագույն, անփայլ, հազվադեպ՝ սև, թույլ փայլեցրած մակերես։ Սափորները գնդաձև ու ուռուցիկ իրաններով միականթ անոթներ են,

զարդարված սեղմամբ և փորագրմամբ ստացված գծերով։ Իրանների նույն մեն ունեն նաև վզի դուրս թեքվող պսակով կճուճները, որոնք հատիկազարդ են։ Մի քանի տարբերակով են ներկայացված գավաթները։ Թասերը երկուսն են։ Միակ գրեղանն ունի մեկ օղակաձև կանթ։

Հայտնաբերված նյութերի զուգահեռները հայտնի են թումանյանից, Դիլիջանից, Գոլովինոյից, Լոռի-Բերդից, Աստղի-Քլուրից, Ծլարից և մ.թ.ա. 8-7-րդ դդ. թվագրվող այլ հուշարձաններից, որոնք հուշում են նաև Ծաղկաշատից հայտնաբերված նյութերի ժամանակը։

Դամբարանաղաշտի հետագա պեղումները կհարստացնեն հայաստանի՝ երկաթի ժամանակաշրջանի նյութական մշակույթի վերաբերյալ մեր ունեցած պատկերացումները։

Կ.Վ. ՍԵՂԲՈՍՅԱՆ

ԿՈՒՄԱՅՐԻ ԲՇԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆ ՊԱՍՊՈՒԹՅՈՒՆԻՒԾ

Կումայրի բնակավայրի պատմությունը սկիզբ է առնում դարերի խորքից։ Գրեթե անընդմեջ գոյություն ունեցող հնագույն այս բնակավայրը պատմական իրադարձությունների բերումով կրել է իր կումայրի սկզբնանվան փոփոխություններ։ Պատմագիտությանը հայտնի է, որ հիշյալ բնակատեղին մ.թ.ա. առաջին հազարամյակի երկրորդ քառորդում ենթարկվել է ուրարտացիների հարակմանը։ Եայտնի է ուրարտական թագավոր Արգիշտի առաջինի սեպագիր արձանագրությունը Ծրիանի երկրի նվաճման մասին՝ գտնված կումայրիից ոչ հեռու Մարմաշեն բնակավայրում։ Մ.թ.ա. 8-րդ դ. Շիրակի տարածքը գտնվում էր վանի թագավորության կազմում։ Հետագայում նույն տարածքով դեպի Անդրկովկաս, Հայկական լեռնաշխարհ են ներթափանցել կիմերական ու սկյութական ցեղերը։ Այդ կապակցությամբ կումայրիի սկզբնանվան առաջացումը բացատրվել է նաև կիմերների ցեղանվանմաբ՝ „Գիմիռա“, /հ.Մ. Դյակոնով/, „Գամիր“, „Գամիռա“, /Ս.Ծ.Երեմյան/ և, որ այդպիսի անվամբ են հին հայերը կոչել կումայրին։ Պատմագիտությանը, սակայն, հայտնի է նաև այն կարծիքը, որ կումայրի տեղանվանման և կիմերների անվան միջև եղած կապը, այնուամենայնիվ, կումայրի հնագույն սկզբնամակ հնլյունային փոփոխության, կոնտամինացիայի արդյունք է /Գ. Ջանկյան/ և „այր“, „բաղադրիչը ավելի նույնանում է հայկական այրի /քարայր/ հետ, իսկ „կումը“, „Արաջավոր Ասիայի տեղանունների

, , կում, , բաղադրիչի հետ: Կումայրի անվան ծագումը, այսպիսով, համարվում է տեղանքի արգասիք /Կր. Ղափանցյան/: Բացատրելով , , կում, , բաղադրիչի իմաստը՝ „, հավաքածու, , , աշատ, , , խմբակցություն, , , անումբ, , կապակցելով այն , , այր, , բաղադրիչի հետ և ելնելով այն հայտնի կարծիքից, որ հին տեղանունները փոփոխության դժվար են ենթարկվում, առաջ է քաշվում այն հետևությունը, որ կումայրին արտահայտում է տեղանքի, բնակավայրի իրական , , բարայրների խումբ, , , Շատ քարայրների բնակավայր, , , բարայրաշատ, , իմաստը /Վ. Իազատրյան, Ա. Պետրոսյան/:

Վերոհիշյալ հետևությունը ավելի հավաստի է դառնում, եթե պարզաբանում ենք այդ հնագիտական, աշխարհագրական, ազգագրական նյութերով: Այսպես, ապացուցվում է նաև և առաջ, որ կումայրիի և նրա շրջակա լայն տարածքում ամենուր լճային փխրուն նստվածքների վրա տուֆի շերտ կա, որը վստահելի տանիք կարող է ծառայել ու եղել է այդպիսին արհետական անձավների համար /Հ. Կ. Գաբրիելյան/, երկրորդը, որ հնագիտական հետազոտությամբ ու պեղումներով Անուրյանի հովտում ամենուր հայտնաբերված են բազմաթիվ կացարաններ և շտեմարաններ՝ փորված հենց տուֆի շերտի տակ /Ա. Հարությունյան, Ա. Պետրոսյան/, և վերջապես նաև այն, որ, ըստ ազգագրական տվյալների, հին կումայրիից ներքեւ՝ „Զերֆեզի Ճորի,, նման տիպի կացարաններից դեպի վեր, հյուսիս հիշյալ բնակավայրը տարածվել ու զարգացել է հաջորդաբար: Ավանդական տնաշինարարության որոշակի արտահայտություններ կարելի է տեսնել հատկապես Օժանդակ կառույց-անձավներում, ժայռափոր ճիրհաններում և այլուր /Կ. Սեղբոսյան/: Այս փաստերը խոսում են հօգուտ այն բանի, որ հիշյալ բնակավայրը եղել է առավելապես քարայրային, ու հին հայերը այն կոչել են տեղի այրաշտության հատկանիշով, այսինքն՝ կումայրի:

Բազմապիսի նյութերն ու պատմահամեմատական մեթոդը հնարավորություն են ընձեռել ապացուցելու կումայրի բնակավայրի հարատևությունը հին և միջին դարերում: Այն սկզբնանվամբ հիշատակված է Անանիա Շիրակացու , , Աշխարհացոյցում, , , ինչպես և մ.թ. 8-րդ դ. Ղևոնդի , , Թատմության,, մեջ: 1209 թ. մի ճեռագրի պատահիկում /Մատենադարան, Ճեռ. Ե 1886/ այն , , կումայրի,, ձևով հիշատակվում է որպես գյուղաքաղաք. այդ անունը 13-րդ դ. հանդես է գալիս կումրի, կումիրի տառաղարձությամբ, 19-րդ դարի սկզբին և հետո՝ Գումրի, Գիմրի, Գումբրի, Վերջապես Գյումրի ձևերով:

1837 թ. հոկտեմբերի 4-ին արդեն պաշտոնապես, կումայրի ժամանակ նիկոլայ առաջին կայսեր հրամանով բնակավայրը վերանվանվում է

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՂ: Վերջապես, 1924 թ. հունվարի 27-ին ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՂի
աշխատավորության ցանկությամբ քաղաքը վերանվանվեց Վ.Ի.Լենինի ա-
նունով՝ Լենինական: Քաղաքի նոր անվանումը ԽՍՀՄ կենտրոնակոմի բա-
ցառության կարգով հաստատեց 1924 թ. փետրվարի 26-ին:

Ա. Գ. ՀԱՅԱԿԵԱՆ

ԿՈՒԵՐԱ ԵՎ ԻՎԱՐԴԱ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՄՐԱՐԱՏԵԱՆ
ԴԱՇՏՈՒՄ ԵՎ ՈՒՐԱՐՏԱ-ԱԲԵՍԵՆՅԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ
ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ուրարտական ժամանակաշրջանում Արարատյան դաշտում վկայված
է /սեպագիր արձանագրություններում/ Իալդի, Արուբանի, Թեյշեբա,
Կուերա, Իվարշա, Մարդուկ, Անիկու աստվածությունների պաշտամուն-
քը :

2. Մարդուրի 2-րդի գահակալության տարիներին Արգիշթինինի լի-
ում ի հայտ է գալիս Կուերայի պաշտամունքը և տարածվում է Ազա երկ-
րով մեկ: Կուերայի պաշտամունքին հին կենտրոնները գտնվել են Վա-
նա լճի ափերին և Եփրատ գետի մոտ, Մելիտենեի /Մալաթիա/ շրջակայքում,
որտեղից և Մարդուրի 2-րդի օրոք եղել է Ներգալը՝ Արգիշթինինի լի:

Կուերան համազրվում է Վրացական Կվիրիայի հետ /Գ. Մելիքիշվի-
լի/: Կվիրիան հողի ու պտղաբերության արական մի աստվածություն է,
որի պաշտամունքի խոր հրդանիշը ունեցել է ֆալլային բնույթ: Հման հատ-
կանիշներով է բնութագրվում և կուերան:

Օշականի ուրարտական ամրոցում բացվել է տաճար, ուր դրված են
եղել մեկ քարե արձան, 25 ֆալլոսներ ու սյուն կուռքեր /Ս. Եսայան/:
Հստ երեսու յթին այդ տաճարը ձոնված է եղել Կուերային, որի պաշտա-
մունքը հնարավոր է միաձու լվել է նման բնույթի որևէ տեղական աստվա-
ծության հետ:

Օշականի ուրարտական տաճարը վաղ հայկական ժամանակաշրջանում
վերափոխվել է մեհյանի /Ս. Եսայան/:

3. Իվարշան հնդեվրոպական ծագմամբ /Հ. Կարագյողյան/, երկսեռ
/Ս. Հմայակյան/ մի աստվածություն է, որի համար Արգիշթի 2-րդը
տաճար է հիմնել էրեբունիում: Իվարշան Եփրատի և Արածանիի գետախո-
նուրդի շրջակայքում տեղադրվող իաթե և ծուպա /ծոպք/ երկրներից Հրե-
բունի վերաբնակեցված բնակչության գլխավոր աստվածությունն է /Գ.
Մելիքիշվիլի/: Այս մասին է վկայում - անվանակերտ վերջաճանցի

առկայությունը այս անվան մեջ, որն հիմնականում տարածված էր Փոքր Ասիայում և ավելի արևմուտք՝ մինչև Հունաստան ներառյալ /Գ. Ղափանց- յան/։ Այսինքն իվարշան կարող է լինել Ծոփքի աստվածությունը, իսկ նրա անունը կարող է հնչած լինել , , , Յար, , Ակով։

Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին առասպելը հայտնի է եղել Ուրարտում և Ուրարտուից է անցել հայերին /Բ. Տուրակ, Ն. Աղոնց, Գ. Ղափանցյան/։ Արայի մասին առասպելը մեսավորվել է Եփրատ գետի ավազանում, Փոքր Հայքում, Կապաղովկիայում և այդ վայրերից տարածվել է Հայկական լեռնաշխարհով մինչև Արարատյան ղազտ ու ավելի հեռու /Գ. Ղափանցյան/։ Արա Գեղեցիկի առասպելի ծագման նախնական վայրը, այդ առասպելի տարածման պատմությունն ու ժամանակը համընկնում են իվարշայի պաշտամունքի համանման մանրամասների հետ։ Հետեւաբար հնարավոր է, որ իվարշան /Յար/ և Արան լինեն միենույն աստվածությունները, մանավանդ որ սլավոնական աշխարհում Արան կրում էր Յար անունը, որը հավանաբար այս անվան հնագույն տարբերակն է։

4. Վաղ հայկական ժամանակաշրջանում իվարշայի տաճարը Ծրեբու- նիում նույնպես վերակառուցվել է մեհյանի։ Այս հանգամանքը բացատը- վում է Աքեմենյանների կրոնական քաղաքականությամբ՝ ամբողջ կայսրու- թյան համար սահմանել մեկ աստծո՝ Անուրամազդայի պաշտամունք /Կ. Հովհաննիսյան/։

Այժմյան վիճակով, Վաղ հայկական ժամանակահատվածում հակամար- տություն է զիտվում Աքեմենյան պարսկական և ուրարտական կրոնների միջև, քանի որ մեհյանների են վերափոխվել ուրարտական աստվածու- թյունների տաճարները։ Հետեւաբար և Վաղ հայկական ժամանակաշրջանում, մինչև Աքեմենյանների գերիշխանության հաստատվելը Հայաստանում շա- րունակել են գործել այդ տաճարները։ այսինքն ունեցել են գրմություն ու երկրպագուներ։ այլապես անիմաստ կլիներ այդ տաճարների վերափո- խումը մեհյանների, քանի որ հին պաշտամունքային վայրերը հաճախ օգ- տագործվում էին նոր կրոնի տարածման համար, նպատակ ունենալով նորով բացասել հինը։ նկատի էր առնվում և այն, որ ժողովուրդը շարունակե- լու է ուխտի գնալ սովորական ղարձած պաշտամունքային վայրերը, հա- ղորդվելով նոր կրոնի հետ /հմտությունակ/։ Քրիստոնեության տարածման պատմությունը Հայաստանում/։

Այսպիսով, Վաղ հայկական ժամանակաշրջանում, Հայաստանում շա- րունակում էր գոյատեև ուրարտական աստվածությունների պաշտամուն- քը և ուրարտական աստվածություններն էին հակաղովում Անուրամազդա- յին։ Մի հանգամանք, որը համանընդուն է Բ. Պիոտրովսկու, Գ. Տիրացյա- նին։

Նի, Ս. Շսայանի այն տեսակետի հետ, թե ուրարտական պետականության անկումից հետո, վաշ հայկական ժամանակաշրջանում, Հայաստանում շարունակում էր գոյատեևը ուրարտական մշակույթը:

Լ. Ը. ԲԻԺԱԿՈՎ

ՀԵՏԱԿՈՒԶԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՄԵՂՐԱՋՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ

ՀՍՍՀ ԳԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ազգագրության ինստիտուտի ՀՈԿԱՄԸ 1982 թ. ամռանը կատարեց տեղանքի զննում և հետախուզական պեղումներ Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղի շրջակայքում:

Գյուղից ոչ հեռու,, Գոթոլի քարեր,, բլրի գագաթին հայտնաբերվեց ոչ մեծ /մոտ 1 հա/ մակերեսով/ կիկլոպյան ամրոց, որը պաշտպանված էր խոշոր քարերով շարված երեք շարք պարիսպներով: Բլրի գագաթից և լանջերից հավաքված խեցելեն նյութը հնարավորություն տվեց ամրոցը նախնականորեն թվագրել մ.թ.ա. 2-րդ հազ. վերջով - 1-ին հազ. սկզբով:

Այստեղ գտնվել են նաև ոչ մեծ քանակությամբ վաշ միջնադարյան խեցելենի բեկորներ, որոնք հնարավորություն են տալիս ասելու, որ այս ամրոցում, ինչպես օշականում, կարմիր-բերդում, Լճաշենում, առաջացել է միջնադարյան բնակավայր:

,, Գոթոլի քարեր,, բլրի հարավային և արևմտյան լանջերում պեղվեցին քարարկղային տիպի 21 դամբարաններ, որոնք թվագրվում են ուշ բրոնզի առաջին /մ.թ.ա. 14-13-րդ դդ./, երկրորդ /մ.թ.ա. 12-11-րդ դդ./ փուլերով և վաշ երկաթի /մ.թ.ա. 10-9-րդ դդ./ ժամանակաշրջանով:

Ուշ բրոնզի առաջին փուլի դամբարաններից հայտնաբերվեցին զենքեր, զարդեր և խեցելեն իրեր: Դրանցից աչքի են ընկնում միաձույլ խողովակամեւ կոթառով դաշույնը, որի նմանները հայտնաբերվել են Արթիկում և կարմիր բերդում: Կայծքարից և վանակատից պատրաստված նետառաքներ և , հնդկական ընկույզի,, և ունեցող քրեղաններ: Հատկապես հետաքրքիր է այստեղ գտնված շքեղ, կլոր ստվար, որի իրանի վերին մասում կոթառի տակ կան երկու կլոր անցքեր: Այս ստվարը նմանվում է Արթիկից գտնվածին, բայց տարբերվում է նրանից, կոթառի վրա առյուծի քանդակի առկայությամբ:

Ուշ բրոնզի դարի երկրորդ փուլի դամբարաններից հայտնաբերվեցին միայն խեցելեն իրեր:

Վաղ երկաթի դարի դամբարաններում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ տարբեր զարդեր՝ ապարանջաններ, օղեր, քունքազարդեր և այլ իրեր, ինչպես նաև մեծ թվով խեցեղեն առարկաներ։ Հատկապես հետաքրքիր է այստեղ գտնված՝ սարդիոնից պատրաստված կոճակը /տրամագիծը 2 սմ/, հարդարված նստած առյուծի պատկերով։

Հ.Ե. ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԵՐԻՆ ԸԱԿԵՐ ԴԱՄԲԱՐԱՆԱԿՑՈՒՄ 1981 թ. ԿԱՏԱՐԿԱԾ
ԴԱՏԱԱՅԽԻՆ ԱՌԱՋԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Վերին նավեր դամբարանաշաշտը գտնվում է Արագած լեռան հարավային ստորոտում, Աշտարակ-Լենինական, Աշտարակ-Բյուրական ճանապարհների ճյուղավորման շրջակայքում, շրջկենտրոնից 3-4 կմ արևմուտք։
1981 թ. պեղվեցին 4 դամբանաբլուրներ։ 3-ը միջին, 1-ը ուշ բրոնզեդարյան։

2. Միջին բրոնզեդարյան դամբանաբլուրները /Բ 27 և 28/ պատկանում են կարմիրբերդյան մշակույթին։ 4-6 մ տրամագիծով և 0,3-0,4 մ բարձրությամբ լիցքի ներքո բացվեցին տուֆե ծածկի սալերը և նրանց օղակող կրոմլեխները, շարված միջին չափսի բնական որձաքարերով։
Կրոմլեխներից մեկն ունի կանոնավոր շրջանի ձև, մյուսի ներքին տարածքը մասնատված էր շրջանի ներսում դրված քարե շարքերով։ Դամբանափոսերը վերին մասում հիմնառողային են, իսկ նրանց ստորին հատվածները փորված են տուֆե ժայռի մեջ։ Կողմնորոշված են հյուսիս-հարավառանցքով։ Դամբարանների հյուսիսային մասում գտնվեցին գունազարդ և սև փայլեցված կավանոթներ, իսկ կենտրոնական մասում ապակյա, հախճապակյա և ոսկե մանր ուլունքներ։ Դիակը հողին էր հանձնված կծկված ոտքերով, աջ կողքի վրա, գլխով դեպի հյուսիս, դեմքով՝ արևմուտք։ Բ 28 դամբարանում կատարվել էր կրկնակի թաղում։ Հիմնական թաղումից 40-50 սմ բարձր բացվեցին նորածնի գանգը և ոսկե ուլունքներ։

3. Ինքնատիպ երևույթ էր Բ 11 դամբանաբլուրը։ Այստեղ դամբանաբլրի ներքո բացվեց հյուսիս-հարավ առանցքով բնական որձաքարերից շարվածք։ Արևել այլ շինություն կամ ծեսի հետքեր չղիտվեցին։ Քարե շարքը դրված էր մայր հողի վրա։ Քարերից մեկի 1/3-րդո հայտնաբերված խեցու բեկորի հիման վրա այն թվագրվում է միջին բրոնզի դարով։



4. Ուշ բրոնզեղարյան դամբարանը կառուցված էր տուֆի ժայռի վրա։
Քարահողային դամբանաբլրի ներքո բացվեց ուղղանկյուն, հյուսիս-
հարավ առանցքով ժայռափոր դամբարանը, որին արևմտյան կողմից հպված
էր ճեղքված տուֆի բեկորներից մի կիսաշրջան։ Այս կիսաշրջանի քարե-
րից մեկի երեսին փորագրված է հիերոգլիֆ հիշեցնող պատկեր։ Դամբանա-
խցի վրա ծածկի սալեր չկային։ Զհայտնաբերվեցին նաև մարդու կամ կեն-
դանու ոսկորներ։ Դամբարանի հարավային հատվածում հայտնաբերվեցին
սև փայլեցված երկու կավանոթներ՝ քրեղանի և սափորի կես հատվածներ։
Կավանոթները կիսված վիճակով դամբարան էին դրվել ըստ թաղման ծեսի։
Կարելի է ենթադրել, որ մենք այստեղ վկա ենք ուշ բրոնզի դարի վաղ
փուլին պատկանող կենոտաֆ թաղման։

Հ.Ա. ԱՀԻԶՅԱՆ

ԶՈՎՈՒՆԻ ՔԱՐԱՅՐ-ԿԱԾՄԱՆԻ ՀՆԿԱԲԱՆԱԿԱՆ

ՆՇՈՒԽԵՎԻԼ

1. Նախամարդու և կենդանիների պեղածոներ հայտնաբերվել են
այնպիսի շերտերում, որոնք իրենց բնական հաջորդական շարժերից դուրս
են մղվել տեկտոնիկ և հրաբուխի պատճառով, կամ շատ խոր անցյալում
բերել են գետի հոսանքները և դրանք նոր միջավայրում մնացել են հա-
զարամյակներ։ Այդ են վկայում հրազդանի կիրճի Զովունի քարայրի
առաստաղից պեղված հոմինիդի և այլ Օրգանիզմների ֆոսիլիզացված ոսկոր-
ները, որոնց նկատմամբ հնագիտական շերտագրական պեղման եղանակի կի-
րառումը անհնարին է և ուսումնասիրողին մեծ դժվարությունների առջև
է կանգնեցնում։

Հրազդանի կիրճի քարայր-կացարաններում մարդկային կյանքը բավա-
կան երկարատև է եղել, շարունակվել է մինչև ուշ միջնադար։ Որոշ
անձավներում հայտնաբերվել են ապարներից պատրաստված ստորին, միջին
և վերին քարեղարյան ինդուստրիայի բրոնզե և երկաթե դարի գործիքներ,
խոհանոցի խեցելեն, պաշտամունքային բնույթի քարեր։

2. Զովունի անձավում առաստաղից զգուշորեն պեղելով, հեռացնե-
լով շերտավոր կավավազաթառն բազալտի խարամը, հայտաբերվեց հոմինիդի
և այլ կենդանիների ֆոսիլիզացված ոսկորները, որոնք անջատելով բա-
զալտի շլակից տեղում ֆիքսվեցին 5 տոկոսանի պոլիվինիբուտերուլի
սպիրտային լուծույթով։

3. Հրազդանի կիրճի Զովունի քարայր-կացարանի առաստաղից պեղ-
վել են մարդանման էակի մասամբ մանգանի դենտրիտներով պատված ֆոսի-
լիզացված և որոշ չափով ձևափոխված գանգի մախաթաձև ելուստ, անբակ-

ոսկը, կողոսկըներ, սրբանոսկը, մատների ծայրային կարճ և հաստ ֆալանգներ, նման նեանդերթալյան մարդու ֆալանգներին, ինչպես և բազմաթիվ քարացած երկար ոսկորներ, ֆիտոլիտարիաներ: Քարայրի առաստաղից հայտնաբերվել են նաև կենդանական մնացորդներ:

4. Զովունի անձավի հրապարակի ստորին շերտերում գտնվեց մուստիեի էպոխայի թափանցիկ վանակատից երկարավուն թիթեղ, որը կրում է մշակման և օգտագործման հետքեր: Բավականաչափ նյութեր են հավաքվել տեղի լանդշաֆտի ֆլորայի վերաբերյալ: Քարայրաբնակ մարդն օգտագործել է շրջապատի բուսականությունը: Զովունի քարայրից պեղված մարդանյութան էակի ոսկորների այստաբանական-պալեոռենտիկական պատկերը ցույց է տալիս ֆոսիլիզացված կրծոսկը վրա նկատվող բորբոքային երևույթների հետևանքով առաջացած ներծծում:

5. Զովունի քարանձավի վերին շերտերում հայտնաբերված հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ այն օգտագործվել է նաև հետագայում՝ անտիկ ժամանակներում և միջին դարերում:

Բ.Ն. ԱԽԱԲԵՂՅԱՆ, Ժ.Դ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՄՐԱՑԱՏԻ 1981-1982 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ

ԱՊԴԹՈՒՄԲՆԵՐԸ

1981-1982 թթ. արշավախումբը շարունակեց աշխատանքները 5-րդ և 8-րդ բլուրների վրա: 8-րդ բլուրի ամֆիթատրոնական մասի հյուսիսային թևում, նախորդ տարիներին բացվել էին հինգ , , պիոլոցներ,, , իրենց արտադրական ու կենցաղային կառույցներով: Այստեղ բեքությունը դեպի հարավ, աստիճանաբար պակասում է, ուստի 4-րդ և 5-րդ փողոցներում շինարարական շերտերը /բացվել է չորս շերտ/ բավականին խորն են /մոտ 3-3,5 մ/, համեմատաբար լավ են պահպանվել 1-ին, 2-րդ և 3-րդ շերտերը:

1981-1982 թթ. աշխատանքները կենտրոնացվեցին 8-րդ բլուրի 5-րդ գովորոցի,, արևելյան տեղամասում, որտեղ ուղիեցը կտրուկ բարձրանում է և աղեղնաձև թեքվում հարավ: Հարկ էր պարզել, թե ինչպիսին է հատակագծային լուծումը այս հատվածում: Այս տեղամասը անձրևաջրերից խիստ լվացված է: Ամենաստորին շերտում, դեռևս թաղամասի կառուցապատման ժամանակ անձրևաջրերն հեռացնելու համար թողնը ված 80 սմ լայնությամբ առուն լցվել է: 3-րդ և 4-րդ շինարարական շրջանի պատերը գրեթե բացակայում են, 1-ին շինարարական շրջանից

քիչ բան է պահպանվել, որովհետև երկրորդ շինարարական շրջանի շերտերը հասցված են մինչև մայր հողը:

Տեղամասի հյուսիսային հատվածում, 4-րդ Հինգութիւն, զիմաց, ժայռերը փորվել կամ հարմարեցվել են պատերին և կառուցվել տերրասաձև փոքր սենյակներ: 5-րդ փողոցի արևելյան ծայրում, դեպի հարավ պտույտի մասում, բացվեց մի հետաքրքիր համալիր, որի պեղումները դեռևս ավարտված են: Նրա արևմտյան սենյակների պատերը գրեթե չեն պահպանվել, սակայն արևելյան մասի, սենյակներից չորսը, բավականին վատ վիճակում չեն: Այն պերվել է ոռժեղ հրդեհից: Հատակին թափված են ծածկի վառված գերանները /տր. 15-20 սմ/, տախտակները /հաստ. 4 սմ/ ու եղեգնը, խեցեղ են անոթների հետ խառնված վիճակում: Սենյակները սալահատակված են: Հայտնաբերված նյութերը վերաբերում են 1-2-րդ դարերին: Համալիրը կառուցված լինելով մ.թ. 1-ին դարի 60-70-ական թվականներին, այսինքն 2-րդ շինարարական շրջանում, հագանաբար պերվել է 163 թ., երբ հռոմեական զորքերը գրավեցին և մասմբ պերեցին Արտաշատը: Խեցեղ են անոթները դասավորված են եղել փայտե դարակների վրա, ուստի հրդեհի ժամանակ նրանց մի մասը ընկել է մեծ անոթների կողքին, և ճզմվել կարասների ծանրության տակ: Խեցեղ են բազմազան ու հարուստ հավաքածուն մեծ հետաքրքրություն է ներկայացնում և օգնում շատ հարցերի նայել նորովի: Բւշագրավ են տարբեր նշանակության սպասֆները, արջի ամբողջական պատկեր ներկայացնող անոթը /ասկու/, սլացիկ, ճգված իրանով, երկկանթանի, եղջերվի երկու գլուխներով ավարտվող /մեկը թերի/ անոթը, կանթերի վերևում և ներքնում կենդանիների գլուխներով հարդարված սափորները, սև լաքի ընդօրինակություն հանդիսացող փիալայի տիպի մեծ թասը, որն աչքի է ընկնում խեցու նրբությամբ ու փայլեցումով, չորս պատրույգի համար պատրաստված երանքագը, ներմուծված սափորները, տաշտերը և այլն: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև կնքաղրոշմները հունարեն արձանագրությամբ մոնոգրամայով, դիմանկարներով և այլ պատկերներով: Համալիրի մեծ սենյակում գտնվեցին նաև կշռաքարեր:

Համալիրի մեծ սենյակի հատակի տակ, ժայռերի արանքից, գտնվեցին բազմոցին նստած մոր ու մանկան արձանիկ, որն առաջին անգամն է հանդիպում Արտաշատում և անշուշտ պատկանում է վաղ Օրինակների թը-վին, կամարի տակ, բազկաթուին նստած, երեխան կողքին կանգնած, մոր ու մանկան արձանիկ և նման արձանիկի քեկոր կատարյալ մշակմամբ, փյունիկյան սրբակ և այլն:

Վերջին տարիների պեղումները հարստացրին կավե արձանիկների հավաքածուն, թե հայտնի և թե նոր տիպերով:

Միանգամայն նորություն է մ.թ. 1-ին դարի շերտից սալահատակի տակ 18 թվականը. հայտնաբերված երկանքանի փոքր կարասը, որի ուռուցիկ մասում, վարպետը վերադիր զարդերով, պատկերել է որսի տեսարանը՝ չեծյալը շների հետ միասին հետապնդում է եղջերուներին ու քարայժերին: Կարասի մեջ կար աղի նման սպիտակ նստվածք:

Կարևոր գտածոների թվին է պատկանում 21 թվականը լիցքի մեջ հայտնաբերված ապակյա սրվակի, գիպսե կաղապարի փեղկը: Նրա մեջ փչումով պատրաստված անոթը պատկերում է սոճու կոն: Ապակյա նման սրվակները համարվում են սիրիական: Ապակու կաղապարը վկայում է հայաստանի, մասնավորապես Արտաշատի Սիրիայի հետ ունեցած առևտրա-տնտեսական սերտ կապերի և Արտաշատում ապակեգործության արհեստի բարձր զարգացման մասին:

5-րդ բլրի վրա աշխատանքները կենտրոնացվեցին, նախորդ տարիներին բացված համալիրներից արևմուտք և հարավ-արևելք, ընդհանուր 200 քմ մակերեսով: Բացված սենյակները վերաբերում են մ.թ. 1-2-րդ դարերին: Այդ շրջանի նյութերը, սակայն, խիստ աղքատիկ են: Ուշագրավ են ներմուծված թասերի, կարմիր լաքով սկուտեղի, ջնարակած խեցեղենի բեկորները: Հատակների տակ որոշ տեղերում գտնվեցին նաև գունազարդ խեցեղենի հետաքրքիր նմուշներ՝ նշտարակե զարդերով փիալաներ: 5-րդ և 8-րդ բլուրներից գտնվեցին նաև դրամներ, որոնցից մի քանիսը առաջին անգամն են հայտնաբերվում, ոչ միայն Արտաշատում, այլև Հայաստանում:

Գյուղի տարածքում պատահաբար գտնվեցին մարմարե, բնականին մոտ մարդու արձանի մի ազդը և երկու զոհասեղան, որոնցից մեկի վրա պահպանվել են կարմիր ներկի հետքերը:

Այսպիսով, հայտնաբերված նյութերը միանգամ ևս վկայում են Արտաշատի առևտրական, արհեստագործական և մշակութային խոշոր կենտրոն լինելու մասին:

Գ.Ա. ՏԻՐԱՅՉԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ 1981-1982 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1. Արմավիրի միջնաբերդի մերձակարային ուրարտական դարաշրջանի համալիրը լրացվեց նոր բաժանմունքներով ու սենյակներով: Ամբողջապահ համալիրի միջանցքը /երկարությունը մոտ 50 մ/, որը մի կումից

իր թևերի մեջ է առնում նախորդ տարիներին պեղված թ 1 և 2 սենյակները, իսկ մյուս կողմից իր երեք դռներով հաղորդակցվում համալիրի հարավային, արևմտյան ու հյուսիսային բաժանմունքների հետ՝ կապելով նրանք իրար։ Արշանցքից հյուսիս և արևմուտք պեղվեցին երկուական սենյակներ աղյուսե լավ պահպանված պատերով չնայած միջին դար երում նրանց հասցրած վնասներին։

2. Ուրարտական համալիրի հնագիտական նյութը ներկայացված է կավանոթների, այդ թվում կարմիր փայլեցրած բարձրորակ նմուշների բեկորներով, մետաղե իրերով, զարդի առարկաներով։ Նախորդ տարիների նմանությամբ գտնվել են դռան բրոնզե փակերի և ծխնիների բնորոշ բեկորներ։

3. Ուրարտական սենյակներից մի քանիսը ամենայն հավանականությամբ օգտագործվել են հելլենիստական ժամանակաշրջանում։ Անյակների վերին շերտերում գտնվեցին այդ ժամանակաշրջանի բնորոշ կավանոթներ, ամբողջական կամ բեկորային գիճակում, գունազարդ օրինակներ, պորֆիրիտե թասի բեկոր, տեղի ծայր, որոնք մի անգամ ևս վկայում են ամրոցում կյանքի վերականգնման մասին՝ ետու բարտական ժամանակաշրջանում։

4. Արմավիրի քաղաքային թաղամասում շարունակվել են աշխատանքները հելլենիստական ժամանակաշրջանի ազարակից հյուսիսի ընկած տեղամասում։ Այստեղ լավ սահմանագատվում են շինարարական նրկու շերտերի հետքերը։

Այս տեղամասում գտնված հնագիտական նյութը վկայում է, որ շինարարական մնացորդները վերաբերում են մշակութային նույն ժամանակաշրջանին։ Հնագիտական նյութը բաղկացած է աշխատանքային քարեգործիքներից, զարդի առարկաներից և խեցելենից, որն իր հատկանիշներով կրկնում է միջնաբերդում գտնված կավանոթների բնորոշ առանձնահատկությունները։

Ժ Դ Խ Ա Հ Ա Մ Ա Տ Ր Ա Մ

Գ Ա Ր Ե Ւ Ի Շ Ե Ր Ո Ւ Յ Ե Ր Ը

1981-1982 թթ. պեղվում էր ամրոցի արևելյան հատվածը, որը գիշու սումնասիրված տեղամասներից է։ Երրորդ աշտարակի մոտ վերցվեց բազմանիք մեծ մակերես [200 քմ], այդ հատվածի անտիկ և միջնադարյան ժամանակի պատկերը երևան հանճյուղ համար։ Պարզվեց, որ ամենավերին

շերտը վերաբերում է 14-15-րդ դարերին։ Հայտնաբերվեցին ջնարակած և հասարակ խեցեղենի, ազակյա ապարանջանների և չինական սելազոնի բեկորներ։ Այս շերտում կային նաև մեծ թվով թոնիրներ։ Ծրկրորդ՝ 13-14-րդ դարերի շերտին պատկանող բնակելի կոմպլեքսը, իր տնտեսական հարկաբաժնով, բարդ հատակագիծ ունի։ Շինարարական տեխնիկան նույնն է, կառուցված է տճե քարերից, կավով։

Բացվեց 12-13-րդ դարերում կառուցված հնամանը, որի սվաղած հատակը հետագայում օգտագործվել է որպես բնակարան և այնտեղ փորվել են թոնիրներ։ Հայտնաբերված նյութերի մեջ մեծամասնություն են կազմում ջնարակած և հասարակ խեցեղենը։ Ուշադրության արժանի են Սուլթանաբաղից և Քաշանից Ներմուծված, բարձրորակ հախճապակին, ինչպես նաև 9-10-րդ դդ. ջնարակած խեցեղենի բեկորները, որոնցից մինչ այդ գառնիում հայտնի չէին։ Այս համալիրի հատակից ներքև փուլ եկած պատերը մաքրելուց հետո, 3,5 մ խոր+ վրա բացվեցին 12-րդ դարին վերաբերող շինության հետքերը, ըստ որում, արևելյան պատը դրված է պարսպին զուգահեռ 1-2 մ հեռավորության վրա։ Հայտնաբերվեցին երկաթյա գրեթե ամբողջական մանգաղ, հախճապակե անոթների բեկորներ, վրան մարդու պատկերով, որը ներմուծված է ըստ երկույթին միելից և առյուծի ու ելեֆ զիմաքանդակով, ինչպիսիք հայտնաբերվել են Անիից, Դվինից և Անդրկովկասի այլ հավայրերից։ Մեր Օրինակը հավանաբար բերվել է Դվինից։ Այս շերտում կարասի ուսի մոտ գտնվեց հեթանոսական տաճարի բազալտե կալիպտերի մի մեծ բեկոր։ Վերջինս վկայում է այն մասին, որ տաճարի ծուծկը մի քանի անգամ վերանորոգման է ենթարկվել։ Այդ են ապացուցում նաև տաճարի շրջակայքում հայտնաբերված բազալտե սոլենների ու կալիպտերների, նախկինում գտնված, բեկորների ուսումնասիրությունը։ Դրանք ունեն տարբեր մշակում և հաստություն, մի քանի կալիպտերի վրա պահպանվել են սվաղի հետքերը և վերջապես կալիպտերների փորված մասի լայնությունները, ինչպես նաև սոլենի եղրից լայնությամբ եղած թեք ելունների լայնությունները տարբեր են /8-13 սմ/։ Միջին դարերում այդ կալիպտերներն օգտագործվել են իբրև ջրհորդաններ, հնամանների ժորաններ, ինչպես մեր Օրինակում, իսկ սոլենները՝ իբրև հատակի սալեր։

Գյուղի հյուսիսարևմտյան ծայրին, Մարտոյի բլրի վրա արշավախումբը նախորդ տարիներին պեղել էր հելլենիստական շրջանի սալարկղային և կարասային թաղումներ։ 1982 թ. բլրի կողքով հոսող գետակը, բացել էր մ.թ. առաջին դարերի դամբարաններ, որոնք ավերվել եին

բնակիչների կողմից։ Արշավախմբին հաջողվեց և եռք բերել նյութերի մի մասը՝ գնդամեն իրանով, ապակյա երկկանթանի և կաղապարի մեջ փշած քառանկյուն մի կանթանի սրվակները, ձիու երկաթյա սանձը, սրաքարը, ներմուծված ժողովականեցին, ապակյա ճարմանդը, որոնք պատկանում են մ.թ. 2-րդ դարին։ Այս նույն դամբարանում եղել են նաև երկու ոսկյա դրամ, մեկը Տրայանոսինը /98-117 թթ./, մյուսը Անտոնինոս Պիոսինը /138-161 թթ./, որը արշավախմբին չհաջողվեց և եռք բերել։ Քննությունը ցույց տվեց, որ այստեղ եղել է գետաքարերից կրաշաղախով շարված, վրան սալերով ծածկած դամբարան, որն առաջին անգամն է հանդիպում Դառնիում։ Թաղումներից մյուսը եղել է կարասային։ Նոր դամբարաններ գտնելու ուղղությամբ արշավախմբի կատարած աշխատանքները փոքրածավալ եին և հաջողություն չունեցան։

Ի.Ա. ԿԱՐԱՎՈՅՉՅԱՆ

ԿԱՐՃԱՂԲՈՒՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Կարճաղյուրի պեղումները 1982 թվականին ընթացան բնակավայրում և դամբարանաղաշտում։ Բնակավայրում աշխատանքները կենտրոնացվեցին նախկինում պեղված բնակելի շինությունների և պարսպի միջև ընկած տարածքում։ Այստեղ բացվեցին երկու նոր, իրար հաղորդակից սենյակներ՝ /8 և 10/ 5,90 × 14,80 մ ընդհանուր տարածությամբ։ Ե 10 սենյակում, արևելյան պատը ներսից ուներ 1,5 մ × 1,5 մ չափերի որմնահեց, որին կից պահանվել էին մեծ չափերի 0,8 մ × 0,6 մ × 0,85 մ /հետքեր։ Սենյակները կրում են վերակառուցումների պարզորոշ հետքեր։

Նախկինում պեղած նո. 1 և 8 սենյակներում ժամանակավոր բնույթի վերակառուցումների հեռացման ժամանակ, նրանց համար ընդհանուր արևմըտյան պատի վրա, բացվեցին երկու մուտքեր /1,3 մ և 0,8 մ լայնություններով/, որոնք առաջին բնակելի հատվածը միացրին երկրորդի հետ։

Բնակարանների վերին շերտերում, պատերին կից և մուտքերում, ինչպես նախկինում բացվեցին թաղումներ, կատարված և վաճեն շարվածքներով դամբարաններում /երկ. 1,2 մ – 1,4 մ, լայն. 0,8-0,9 մ, խոր. 0,6 մ/ և կճուճներում։ Հետաքրքիր են առաջին անգամ հանդիպող կեղծ թաղումով /կենոտաֆ/ և նետած դիրքով կատարված թաղումով դամբարանները։

Պեղումների միջոցին և եռք բերված հնագիտական նյութը՝ հիմնականում խեցեղեն է իր խոհանոցային, տնտեսական և սպասեղենի տե-

սականիով։ Հայկինի պես առատ են գործիքները՝ բազալտե աղորիքները, գետաքարե կոկիչները, քերիչները, ջուլհակի հաստոցի կավե կլոր կախիկները։ Նշանակալի է և կնորսական ուռկանի, չեղաքարե լողանի գյուտը։

Դամբարանաղաշտում պեղված ոչ մեծ չափերի $10,7 \times 0,8 \times 1,5$ մ/
դամբարանի ձվաճակ խուցում կատարված էր Ս Բաղում։ Վերին յոհը ուշ
կատարված թաղումներ են առանց ուղեկցող՝ գույքի։

Դամբարանում հանգուցյալները թաղված էին մեջքի վրա։ Ըրանց
ուղեկցող իրերը երկաթե ուղիղ և կեռ դանակները, նիզակը, օձագը-
լուն և ներճկված ապարանջանները, քունքի օղերը, զարդաքորոցը, ճար-
մանդները և բազմատեսակ ու լունքները, կապույտ ապակյա բազմանիստ
կնիքով, ամբողջությամբ համապատասխանում են հելլենիստական դարա-
շը թաղանական դամբարանային համալիրներին և թույլ են տալիս դամբարանի
հիմնական թաղումը թվագրելու մ.թ.ա. 2-1-ին դարերով։

Գ. Գ. ՔՈԶԱՄՅԱՆ

ԵՐԻ ՇԹՈՒԹԵՐԻ ԴՐԻՆԻ ՀԵԼԼԵՍԻՍԱԿԱՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/1982 թ. պեղումներ/

Միջնադարյան հայաստանի մայրաքաղաք Դիմինում՝ 1937 թ. ի վեր՝
տարիների ընթացքում հայտնաբերված անտիկ դարաշը թական
մշակույթի տարբեր բնագավառները ներկայացնող /ճարտարապետական
մանրամասներ, խեցեղեն, ապակի, կնիքներ, գրամներ, պաշտամունքա-
յին բնույթի հուշարձաններ, կարասային թաղումներ և այլն/ և տնտե-
սական կյանքին ու արտադրական գործունեությանն առնչվող նյութերը
/դուրս եր, տառապաններ, աղորիքներ, սանդ/ հավաստում են հիշյալ
ժամանակաշրջանում մի ամբողջական հուշարձան-համալիրի գոյությու-
նը այստեղ։ Նորագույն պեղումների և շերտագրական զիտողություն-
ների արդյունքները հնարավորություն են ընձեռում նորովի լուսաբա-
նել Դիմինի անտիկ բնակավայրին առնչվող որոշ հարցեր։

1982 թ. միջնաբերդի գագաթում՝ „բակա”, կոչված պեղավայրում
շերտագրական հատուկ նպատակով կատարված պեղումները 250 քառ.մ ըն-
դարձակ մակերեսով շարունակեցին հելլենիստական շերտի բացահայտու-
մը, որը հստակ ընկնում է վաղ միջնադարյան և մ.թ.ա. 10-8-րդ դդ.
շերտերի միջև և թվագրվում ժամանակի բնորոշ գույնագույն և հասարակ
խեցեղեն ենով։

Պեղումները կենտրոնացվեցին նաև միջնաբերդի գագաթի հյուսիս-արևելյան մասում։ Արշակունիների գահանիստ դահլիճին անմիջապես կից պեղվեց մոտ՝ 100 քառ. մ մակերեսով մի հատված, որտեղ հայտնաբերվեց 1,5 մ հզորությամբ հելլենիստական շերտը ուշադրության արժանի շինարարական մնացորդներով։ Վերջիններս մասամբ առնչվում են պեղավայրից արևմուտք՝ դեռևս 60-ական թվականներին պեղված հատվածի անտիկ շերտում ի հայտ եկած քարե հիմնապատերի, ինչպես նաև տորամեզույթ խարիսխների հետ և որոշ հատակագծային պատկեր ստեղծում։ Հելլենիստական և վաղ միջնադարյան կառույցների միջև բացահայտվեցին կարևոր շինարարական հանգույցներ, որոնք հնարավորություն ընձեռեցին որոշակիորեն սահմանազատել երկու տարբեր շինարարական դարաշրջաններ։

Բննվոր շերտը ներկայացված է հելլենիստական շրջանի գունազարդ խեցելենի բազմազան օրինակներով /տափաշշերի, կարասների, թաս-քրեղանների, փիալանների, ափսեի, խոհանոցային անոթների բեկորներ/։ Գտնվել է նաև նրբախեցի անոթի բեկոր՝ ներմուծված, հավանաբար, փոքրասիական հելլենիստական կենտրոններից։

Ֆ. Ի. ՏԵՐ-ՄԱՐԻՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆՏԻԿ ՇԻՐԱԿԱՎԱԾԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ք1981-1982 թթ. /

1981 թ. աշխատանքները կենտրոնացվեցին 1 պեղավայրում, բացվեց մոտ 4000մ² տարածությամբ մի հրապարակ, որն ընդգրկում է նախորդ տարիներին պեղված բնակարանների հարևանությամբ մնացած ոչ շտարածքը։ Այս ժայրամասային հատվածների պեղումներն ու ստուգումները վերջնականապես ապացույցեցին ամրաշինությունների բացակայությունը տվյալ բնակավայրում։ Պեղված տարածքում առկա է հաջորդական ժամանակների երեք շերտ։ 1-ինը /մ.թ.ա. 2-ին դդ. / բնորոշվում է մոնումենտալ բնույթի ճարտարապետական կառույցներով և ուղեկցվում է բազմերանգ գունազարդում ունեցող խեցելենով։ Ճարտարապետական իմաստով առանձին հետաքրքրություն է ներկայացնում ներքնահարկով տունը, որի պատերն ունեն կիկլոպյան շարվածք։ 2-րդ շերտը /մ.թ.ա. 1-ին դ. - մ.թ. 1-ին դ. / բնորոշվում է վաղ շրջանի կացարանների և ընդարձակ տնտեսական բակերի առկայությամբ, որտեղ բացվում են հիմնահողային և կարասային թաղումներ։ Տվյալ փաստը, թերևս, խոսում է նախնիների պաշտամունքի մասին։ Այս 2-րդ փուլը ուղեկցվում է միա-

գույն գունազարդ խեցեղենով / սև զարդանկարը կարմիր. հիմնագույնի
վրա/, զուգորդված գորշ և կարմիր փայլեցրած մակերես ու նեցող անոթ-
ների հետ: Այս շերտում երևան է գալիս նաև իազված գծազարդով խեցե-
ղենը: Ուշագրավ են կենդանակերպ խեցանոթների բեկորները. դրանցից
մեկի սև փայլեցրած մակերեսին պատկերված է ազնիվ եղջերու: Հետա-
քըրքիր է նաև իշայժյամի եղջյուրների հայտնաբերման փաստը այս շեր-
տում, որը մատնանշում է անտառների առկայությունը հին Շիրակի տա-
րածքում:

Յ-րդ շերտը /մ.թ. 2-3-րդ դդ./ բնորոշվում է ղեւես 1980 թ.
պեղումների ընթացքում բացված տնտեսական կառույցներ և բակեր ու նե-
ցող բնակարանների խմբերով: Այս ժամանակաշրջանի խեցեղեն արտադրան-
քը հիմնականում բնորոշվում է գորշ գույնի անոթներով, որոնք ունեն
իազված մակերեսներ: Հայտաբերվում են նաև կարմիր ներկված, ինչպես
և բաց վարդագույն կամ սպիտակ գույնի խեցանոթներ, որոնք լայն տա-
րածում են ստանում միջին դարերում: Նյութերից նշանակալից են
տնտեսական հորից հայտնաբերված ապակե սրվակն ու ամբողջական խեցա-
նոթները:

Պեղավայրի ջրասույզ արվելու հետևանքով, 1982 թ. աշխատանքնե-
րը կենտրոնացվեցին Յ-րդ պեղավայրի մոտ գտնվող վերին հարթակում:
Այստեղ դրվեցին նոր քառակուսիներ, 1000 m^2 ընդհանուր տարածությամբ:
Պեղումների ընթացքում պարզվեց, որ ոչ հզոր մշակութային շերտը այս-
տեղ զգալիորեն ավերվել է հողը հերկելիս: Այստեղ դիտված Յ շերտ:
Դրանցից վերևինը դամբարանաղաշտ է և թվագրվում է մ.թ. 2-3-րդ դդ.
Այստեղ բացվեցին քարարկղներում կատարված թաղումներ, որը հայտնա-
նում լայն տարածում ուներ նաև առաջին դարերում: Աակայն Շիրակավա-
նի թաղումները առանձնանում են ժամանակակից վրա արված անցքերով,
որոնք բացի տեղափոխման նպատակներից հավանաբար ունեցել են նաև
ծիսական նշանակություն:

Հետաքրքիր է 1982 թ. բացված նո. 74 կանացի դամբարանը, որի
ժամանակասալը /չափերը՝ 50x120 սմ/ ի տարբերություն մյուսների, ստո-
րին ծայրի անցքից բացի ունի մեկ այլ նոշոր /21 սմ տրամագծով/
անցք, քարի կենտրոնական մասում: Հավանական է, որ այն ծառայել է
ինչ-որ քարե կուռքի ամրացման համար: Շիրակավանի դամբարանաղաշտում
հին ծեսերի առատ հետքերի պահպանվածությունը թերևս բացատրվում է
տաճարական համայնքի առկայությամբ:

Միջին շերտը դիտվում է ճարտարապետական կառույցներով, որոնք
պատերի և հատակների մակարդակով ու սյուների խարիսխներով բաժան-

վում են երկու շինարարական հորիզոնի: Կառույցների պատերը խիստ ա-
վերված են, դիտվում են հրղեհի հետքեր, որի հետևանքով հատակների
ժեփը լավ է պահպանվել: Հրղեհի հետ է կապվում նետասլաքի երկաթյա-
եռաթե ծայրը, որը վկայություն է ռազմական ընդհարման, որից հետո
կյանքը վերին հարթակում դադարել է: Հայտնաբերվում են կարմիր լաք-
պատ խեցանոթների տեղական ընդօրինակումների բեկորներ: Ստորին շերտը
առանձնանում է բնակարանների հատակների տակ կատարված կարասային
և հիմնահողային թաղումներով, որոնցում ուղեկցող նյութերը բացակա-
յում են:

Ա. ԴԵՄԻՐԱԿՆՅԱՆ

ԱՎԱՆԻ ՀՈԱՎԱՅԻՇ

/1981-82 թթ. պեղումների արդյունքները/

«

Ավանի նորահայտ բնակավայրը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-
արևելյան մասում, Սովետական շրջանի Ավան թաղամասում, Գետառ գետի
նախկին հունի ձախ ափին: Հնդարձակ հնավայրի մշակութային շերտերի
հզորությունը 2,8 մ է, որոնցից վերին /2 մ հաստությամբ/ շերտը
պատկանում է հելլենիստական դարաշրջանին, իսկ ստորինը /0,5 մ/
վաղ բրոնզեդարին: Այս երկու շերտերը իրարից անջատված են /0,2-2,3մ/
մշակույթի հետքերից զուրկ շերտով:

Կաղ բրոնզեդարյան շերտը ուսումնասիրված է ոչ մեծածավալ երկու
ստուգողական խրամատներում, որտեղից գտնված են մ.թ.ա. 3-րդ հազար-
ամյակի վերջերով թվագրվող խեցանոթների, պաշտամունքային առարկաների
բեկորներ և զանակատից՝ ատամնավոր ներդիրներ, բանեցված կող երով
տարբեր ՑԼԵՊՆեր: 150 քառ. մետր մակերես ունեցող պեղավայրում բացված
են երեք շինարարական շերտեր, որոնց փլատակները մեզ են հասել տար-
բեր պահպանվածության վիճակում: Այստեղ առկա են խոշոր շինություննե-
րի, ինչպես և հյուղակների մնացորդները վերջիններս ամբողջական հա-
տակագծային պատկերներ դեռևս չեն ներկայացնում:

Հուշարձանի հելլենիստական դարաշրջանի վերոհիշյալ շինություն-
ներից հայտնաբերված հնագիտական իրերի հավաքածուն բաղկացած է գու-
նազարդ և հասարակ խեցանոթներից, քարե գործիքներից, երկաթե դանակ-
ների շեղբերից, նետասլաքների բեկորներից և բրոնզե շքասեղից:

Սրանձնակի հետաքրքրություն է ներկայացնում մեծաքանակ գունա-
զարդ խեցեղենը, որը ստորաբաժանվում է մի քանի ձևերի: Սրանք կիսա-
գընդանե և բարձր, դուրս ճկված շուրթերով փիալաներ են, տափաշշեր և

գունազարդ այլ անոթների բեկորներ։ Անացյալ խեցեղ ենը ներկայացվում է տարբեր տեսակի կարասներով, փիալաներով, սափորներով, թասերով, գավաթներով և երեքնու կամ շուրջերով ծորակներ ու նեցող խեցանոթներով, որոնց մի մասը ու նի փայլեցված կամ անգոբապատ մակերես։ Անտիկ շերտին բնորոշ են նաև սև փայլեցված, դուրս ճկված շուրջերով փիալաները, որոնցից մի քանիսի մեջ հատակի վրա առկա են ելուններ։ Խեցեղ են գտածոների շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում շան պատկերով դաշազարդ կանթը։ Հուշարձանի տարածքից հայտնի է նաև շան պատկերով մի կնիք։

Պիեղավայրի հելլենիստական մշակույթը համալրվում է կարասային թաղումներով, որոնցից մեկը հայտնաբերվել է ստորին շերտում։ Իռիզոնական դիրքով դրված կարասի մեջ կատարված էր երկու թաղում։ Կարասում գտնվեցին պարթևական գոտարզ Աթագավորի արծաթե մի դրախտա, արծաթե ականջնող եր, բրոնզե մատանի և ճան։ Դամբարանային նյութերից հետաքրքիր են նաև ավերված կարասային թաղումներից պատահաբար գտնված սարդիոնից, ագաթից, ապակուց և մածուկից պատրաստված ու լունքները, որոնցից մի քանիսն ու նեն ոսկե միջնաշերտ։ Ուշագրավ է Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե դրախտան։ Այս նյութերի նախնական ուսումնասիրության հիման վրա Ապանի հելլենիստական հուշարձանը կարել է թվագրել մ.թ.ա. 2-րդ - մ.թ. 1-ին դարերով։

Հ.Վ. ՍԱԿԱՅԱՆ

ՀԱՊՍԵԱԿԱՆ ԿԱՅՍԻՐԻԹԾԱՆ ԴԱՐՄԸ/ՇԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԴՐԱՄԱԿԱՆ ԾՐՁԱՆԱԹԻԹԾԱՆ ՍԱՍԻՆ

/Հստ Տիգրանակերտի ու Մծբինի նյութերի/

Հայաստանի դրամական շրջանառության պատմությունը հռոմեական դարաշրջանում մինչև վերջին ժամանակները հիմնվում էր Հայկական ՍՍՀ տարածքից, այսինքն Մեծ Հայքի հյուսիսարևելյան մասից, հայտնաբերված նյութերի վրա։ Այդ պատճառով հիշյալ հարցի մշակումն ու բացահայտումը չի կարելի համարել հիմնավոր և ամբողջական։

Վերջին երկու տարիների ընթացքում Հայաստանի պատմության պետական թանգարանը պարբերաբար ստանում է դրամներ հավաքված հիմնականում Տիգրանակերտից, Մծբինից և Նրանց շրջակայթից։ Այդ նյութերը բավականին մեծացնում են մեր պատկերաց ու մները Հայաստանի դրամական շրջանառության մասին Հռոմեական կայսրության ժամանակ ընդհանրապես

և Տիգրանակերտի ու Մծբինի քաղաքային դրամական տնտեսության վերաբեր-
յալ մասնավորապես։ Օավոք, ստացված նյութերը /շուրջ հինգ հարյուր
դրամ/ գտնված են ոչ թե սիստեմատիկ պեղումների շնորհիվ այլ շինա-
րարական աշխատանքների ժամանակ։ Այդ պատճառով նրանց հայտնաբերման
ստույգ մանրամասները մեզ հայտնի չեն։ Աակայն այն փաստը, որ քննարկ-
վող դրամները ծագում են Հին Հայաստանի հելլենիստական կենտրոններից,
վկայում են նրանց գիտական մեծ նշանակության մասին։ Դրամների մեծ
մասը պղնձյա են, մասամբ արծաթյա։ Ուկյա դրամներ տակավին չեն ստաց-
վել։ Ծողովածուի հիմնական խմբերն են կազմում Արտաշեսյան հարստու-
թյան թագավորների կտրած և հռոմեական կայսրական դրամները։

Ծողովածուի հռոմեական դրամների համեմատական քննությունը Հայ-
կական ՍՍՀ տարածքից հայտնաբերված նույն ժամանակի նյութի հետ հնա-
րավորություն են ընկերում հանգել որոշ նախնական հետևությունների։
Այսպես, Օգոստոսի դրամները շրջանառության մեջ համեմատաբար քիչ են
հանդիպում։ Գայոս և Լուցիոս պատկերներով Օգոստոսի դենարներ տակա-
վին չեն ստացվել։ Թեպետ և այդպիսիների առկայությունը բացառված չէ։

Նոր նյութերը վկայում են և այն մասին, որ Տիգրանակերտում և
Մծբինում լայն տարածում են ունեցել հռոմեական պղնձյա դրամները,
թողարկված Դոմիցիանի, Վիտելիի, Տրայանոսի և մյուս ավելի ուշ գահ-
կալած կայսրների Օրոք։ Պղնձյա դրամները ներկայացված են տարբեր նո-
մինալներով, մեծից մինչև ամենափոքր միավորները։

Միաժամանակ հռոմեական դրամների հետ դրամական շրջանառության
մեջ շարունակում էին մնալ նաև արտաշեսյան գահակալների թողարկում-
ները։ Ստացված են ավելի քան երկու տասնյակ պղնձյա դրամներ, որոնց
թվում կան բացառիկ Օրինակներ։ Նշենք, որ այսօրվա տվյալներով, Հայ-
կական ՍՍՀ տարածքում արտաշեսյան պղնձյա դրամների զուգահեռ շրջանա-
ռությունը դիտվում է համեմատաբար ավելի թույլ։

Հռոմեական կայսրության ոսկյա դրամները, ըստ երեսույթին, պետք
է ունենային լայն տարածում, մանավանդ որ արտաշեսյան ոսկյա դրամնե-
րի դրվագման մասին փաստեր դեռևս հայտնի չեն։ Հռոմեական կայսերական
ոսկյա դրամներ Հայկական ՍՍՀ տարածքից ունենք արևանագրված չորս նը-
մուշ։ Նրանցից երեքը գտնվել են Գառնիում և մեկը Հին Արտաշատի տա-
րածքից։ Դրանք հռոմեական առորեուսներ են, դրվագված Տիբերիոսի, Տրա-
յանոսի, Անտոնիոս Պիոսի և Ներոնի Օրոք։ Նշենք, որ առաջին երեք դը-
րամները գտնվել են դամբարաններից։ Անկասկած, ոսկյա դրամները ավելի
քիչ են մեզ հասնում, այդ իրողությամբ էլ բացատրվում է մեր տեղեկու-

Բցունների սակավությունը :

Այսպիսով, վերջին տարիներին հայտնաբերված դրամները հնարավորություն ընձեռեցին նորովի ներկայացնել Հայաստանի դրամական շրջանաւությունը նը հռոմեական դարաշրջանում։ Այժմ կարելի է համեմատաբար լայն պատկերացում կազմել հռոմեական պղնձյա դրամների տարրածման վերաբերյալ Հայաստանի դրամային տնտեսության մեջ ընդհանրապես և առետրատ՝ տեսական այնպիսի հայտնի կենտրոններում, ինչպիսիք են Տիգրանակերտը և Մեքինը։

Հռոմեական դրամների տարածումը Մեծ Հայքի տարածքում իր կազմ մով միատարր չէր։ Այդ պատճառով միայն նոր դրամագիտական վկայությունները և Մեծ Հայքի տարածքից հայտնաբերված հռոմեական գանձերի ու առանձին գյուտերի մանրամասն քարտեզի կազմումը հնարավորություն կտա ներկայացնելու Հայաստանի դրամային տնտեսությունը նը հռոմեական դարաշրջանում հարցերի պրիվ ընդգրկմամբ։

Հ.Ա. ՕՀԱՆՇԱԾ

ԱՆՏԻԿ ԲԵՐԱԿԱՎԱՅՐ ՇԱՄԻՐԱՄԻ ՎԱՂ ԵՐԿԱԹԵՂՄԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԱՏԵՂԻԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Երևանի համալսարանի հնագիտական արշավախումբը 1981 թ. սկսեց Շամիրամի քաղաքատեղիի անտիկ մշակութային շերտի պեղումները։ Քաղաքատեղին ունեցել է անտիկ դարաշրջանում վերակառուցված մի քանի պարիսպ։ Գորրորդ և հինգերորդ վաղ երկաթեղարյան պարիսպների միջև դեռևս 1977 թ. բացվել և ուսումնասիրվել են մի քանի սալարկուային թաղումներ, որոնց մեջ գտնված հնագիտական նյութը /համակենտրոն շրջանագծերով տափաշից, մի քանի տասնյակ ազակյա ու լունքներ ևն/ թվագրվում է մ.թ.ա. 2-1-ին դդ.։

Անտիկ բնակավայրը գտնվում է ամրոցի 5-րդ պարսպի արևմուտք /պարիսպների համարակալումը տրվում է արևելքից/ մինչև հրվանդանի վերշավորությունը ընկած տարածքում։ Բնակավայրի գոյության ընթացքում վաղ երկաթեղարյան պաշտպանական կառույցներից թգտագործվել է վերոհիշյալ 5-րդ պարիսպը։ Կիկլոպյան շալվածքի ուղղանկյուն աշտակների միջև ընկած դատարկ տարածությունը լցվել է նոր՝ անտիկ ժամանակաշրջանին բնորոշ շարվածքով։ Ունդավայրի այս հատվածում /5-րդ պարսպի արևմտյան երես/ վերին շերտից գտնված խեցելեն բեկորները ևս վերաբերում են անտիկ ժամանակաշրջանին։ Բնակավայրի պաշտպանութակությունը նը մեծացնելու նպատակով նրա հարավային և հյու-

սիսային կողմերում կառուցվել են նոր պարիսպներ, որոնք իրար միանում են բնակավայրի տարածքը կազմող հրվանդանի ծայրին:

Երկու տարվա պեղումների ընթացքում բացվել են բնակարանային համալիրներ և սենյակներ: Դրանցից մի քանիսում գտնվել են թոնիրներ, խաղող ճղմելու հարմարանք, աղորիքներ, երկանքի բեկոր, սանդ և այլն: Գտնված խեցեղենը հիմնականում վատորակ է, բայց բազմազան՝ ձևերով և նշանակությամբ: Հայտնաբերվել են նաև լավ մշակված հելլենիստական ժամանակաշրջանի գունագորդ խեցեղենի մի քանի բեկորներ:

Ա. Գ. ԿԱՆԵԾՅԱՆ

ՀԻԾ ԶՐԱՓԻՒ 1981 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հախորդ տարիների պեղումների ընթացքում ձրափիի հին բնակավայրի տարածքում բացվել են իրարից մոտ 20 մ հեռավորության վրա գտնվող երկու շենքերի հիմքերը:

Շինարարական մնացորդների և հնագիտական նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել, որ բնակավայրում եղել է երեք շերտ՝ անտիկ, վաղ միջնադարյան և միջնադարյան:

Երկու շենքերի միջև ընկած տարածությունում բացվեցին պատերի մնացորդներ, սակայն շինությունը խիստ ավերված է: Պատերից մեկի հիմքի տակ բացվեց անտիկ դարաշրջանի կարասային թաղում, որի մեջ կային զարդի առարկաներ /ուշ նքներ, ականջնող/:

Բնակավայրից դեպի արևմուտք Հոկտեմբերյան-Լենինական խճուղու ճախ կողմում, շինարարական աշխատանքների ժամանակ երևան եկան կարսասային թաղումներ, որոնք հավանաբար պատկանում են անտիկ բնակավայրի դամբարանադաշտին:

Ա. ՓԱԼԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԿԱԳՈՒԹՅԱՆ ՀՆԿԱՑՄԱԿԱՆ

ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

/Ա. Բ. ա. Յ-րդ - մ. Բ. Յ-րդ դդ./

Ներկա հաղորդման համար նյութ են հանդիսացել երեք գանգաբանական խմբեր՝ Գառնիից, Շիրակավանից և Կարճաղբյուրից: Այդ գանգերը վերականգնվել են և չափագրվել գանգաբանական ամբողջական ճրագրով:

Գառնիի գանգաբանական խումբը պեղել է Բ. Ն. Առաքելյանը /1951/, չափագրել է Վ. Պ. Ալեքսեևը /1972/, որը բաղկացած է կանացի 6 գանգից: Այդ գանգերին բնորոշ են բավականին խոշոր չափսերը՝ գանգատու-

փը բարձր ու դոլիխոկրան /գանգային ցուցանիշը 74,3/, դիմակմախքը երկար ու խոշոր չափսերի: Այդ գանգերի քթոսկորները ցցված են, դիմային պրոֆիլը օրթոգնատ է:

Շիրակավանի ղամբարանաղաշտի պեղումներից ֆ.հ. Տեր-Մարտիրոսովը /1980-1982/ հայտնաբերել է 28 գանգ /18 տղամարդու, 10 կանացի/: Այդ խումբը հիմնականում բնութագրվում է ցայտուն կերպով արտահայտված երկարագանգությամբ /տղամարդկանց գանգի ցուցանիշը՝ 69,3, կանացը՝ 74,8/: Դիմքը նեղ, միջին բարձրության, ըստ ցուցիչի լեզուպրոզոպ, լավ է արտահայտված հորիզոնական պրոֆիլը: Տղամարդու 5 և կանացի 5 գանգ պեղվել են ի.մ. կարապետյանի կողմից /1982/ կարճալբյուրում: Գանգերից չորսը ամբողջական են, վեցը՝ միայն գանգատուփեր: Արժանի է ուշադրության այն հանգամանքը, որ այս գանգերը մեզոկրան են /գանգային ցուցանիշը՝ 77,2/: Դիմակմախքը նեղ և ոչ բարձր /այտուկրերի տրամագիծը 114,5/: Այս գանգերին առանձնահատուկ է նրբագեղությունը, հարթ մակերեսը:

Ամփոփելով ներկա աշխատանքի արդյունքները կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին՝ ա. Ձևայած որ վերոհիշյալ գանգերը վատ են պահպանված և սակավաթիվ են, այնուհանդերձ նրանց հատկանիշների ամբողջականությունը հիմք է տալիս ենթադրելու, որ հայաստանի տարածքում պեղված և ուսումնասիրված անտիկ դարաշրջանի գանգերը պատկանում են միասնական Եվրոպուրի մարդաբանական տիպին: Կարճալբյուրի գանգերի մեզոկրան լինելը ամենայն հավանականությամբ հանդիսանում է ժամանակակից հայերին բնորոշ կլորագանգության պրոցեսի սկիզբը: Միաժամանակ նկատելի է դիմակմախքի որոշ նեղացում և դեմքի բարձրության փոքրացում:

Ակնհայտ է, որ այդ բոլոր փոփոխությունները հանդիսանում են ոչ թե ուրիշ ցեղախմբերի խառնվելը տվյալ բնակչության հետ, այլ ժամանակի ընթացքում մարդաբանական վերոհիշյալ հատկանիշների օրինացափ փոփոխությունների արդյունք:

Գ.Հ. ԿԱՐԱԿԱՆՅԱՆ, Հ.Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԳՈՐԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԵՍԱ/ԱԾԵԲ/ՀԱՅԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՐՑԱՆ

ՊԱՏԿԵՐԱԿԱՆԵՐՈՒՄ

Հնագիտական գտածոները, հայ և Օտար գրավոր աշբեյուրներից, մասնավորապես արաբ աշխարհագիրներից, եվրոպացի ճանապարհորդներից մեզ հասած տեղեկությունները, ազգագրական տվյալները հավաստում են, որ գորգագործությունը հայաստանում հնագույն ժագում և ժողո-

Վըրդական խոր արմատներ ունեցող, շատ տարածված արհեստներից է: Կիրառական արվեստի այս հնավանդ ճյուղի՝ գորգագործության տեխնիկայի մասին գրավոր աղբյուրները լուսմ են: Այդ պակասը լրացնում են 13-17-րդ դարերի դասական քանդակների հեղինակներից և ժողովրդական վարպետներից մեզ հասած պատկերագանդակները:

Կերպարվեստի այդ բովանդակությամբ ստեղծագործությունները թեև սակավաթիվ են, սակայն բացառիկ հետաքրքիր, առարկայական տեսանելի վկայություններ են գորգագործական տեխնիկայի և գորգերի մասին հայաստանում: Կատարողական և թեմատիկ առումով հետաքրքիր, կենցաղի տարեգրության բնույթու ունեցող 13-17-րդ դդ. այդ քանդակներում խտացված են արտադրական կենցաղի, արհեստների, գյաղմունքի, աշխատանքային առօրյայի առանձին դրվագները:

Վերջին տարիներին մեր դաշտային շրջագայությունների միջոցին գորգագործի ուղղահայց հաստոցի /որը մատենագրությունից հայտնի է ոստայն, Արցախի, Գորիսի բարբառներում՝ վըհստան, ազգագրական այլ գոտիներում տորթ և այլ անուններով/ պատկերներ հայտնի դարձան պատմական Սյունիքի և Արցախի հնավայրերում: Ոստայն-տորթի քանդակապատկերներով են հարդարված Եղեգիսի /Վայոց ձոր 13-րդ դ., Գետաշենի /Մեծ կունք, 17-րդ դ./ միակտուր քարից 0րորոցաձև գերեզմանական կոթողները: Պատկերագանդակներից դատիլով այդ ճշգրիտ, ամենայն մանրամասնությամբ ներկայացված տորթն իր կառուցվածքնվ, վավերական հարազատության մեջ, անփոփոխ կերպով հասել է մինչև մեր 0րերը և կենցաղավարում է հայաստանի գրեթե բոլոր ազգագրական գոտիներում:

Մինչ այժմ հայտնի նորավանքի և Արենիի /Վայոց ձոր/ եկեղեցիների ճակատակալ քարերի մակերեսին Մոմիկի կերտած խմբագանդակներում տեղ գտած գորգերի քանդակներից բացի, երրորդ մեկ ուրիշը վերջերս գտնվեց Ելփին հնավայրում, եկեղեցու ճակատակալ քարի վրա, որի ստեղծողը նույն Մոմիկն է:

Հայ արվեստի հունգարով հարուստ Սյունիքի Վայոց ձոր և Արցախի Մեծ կունք գավառներում իրենց ստեղծագործություններով հայտնի Մոմիկի և 17-րդ դարի կազմող, քարգործվարպետ իալատուրի կերտած այս կոթողները պատմամշակութային անգնահատելի արժեք ունեցող հուշարձաններ են: Ազգագրական արտակարգ հետաքրքրություն ներկայացնող այս քարե, առարկայական ստուգախոս վկայությունները հնարեն տալիս ամբողջացնելու գորգագործության տեխնիկայի պատկերը և գորգարվեստի հաջորդական, անընդմեջ զարգացման ընթացքը միջնադարյան հայաստանում:

Ս.Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ

ՄԱՐՄԱՀԵՆԻ 1980-1982 թթ. ՊԵՂԱԿԱՆԵՐԻ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱ ԳԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ազգագրության ինստիտուտի գիտարշավը 1972 թվականից սկսեց և առ այսօր շարունակում է Մարմաշենի պեղումները: Բացվել են Մարմաշենի վանքի պարիսպը, կլոր եկեղեցին, հյուսիսային գավիթը, կենցաղային և արտադրական կառույցներ:

Բացվել են Վահրամաբերդ ամրոցի միջնաբերդը, բնակարանային կառույցներ, կրկնապարիսպը, մուտքը պաշտպանող աշտարակները և այլ շինություններ:

Պեղումներով լրիվ բացվել են Ֆիրաշեն ամրոցը, սրա մոտ գտնվող վանական համակառույցը:

1980-1982 թթ. Մարմաշենի վանքի տարածքում բացվել է սրբատաշքարերով կառուցված 12-րդ դարի սեղանատունը: Այս տեղամասում՝ պեղվել է նաև 13-14-րդ դդ. շինություն: Պահպանվել է վերջինիս սրբատաշտուֆ քարով առանց կրաշաղախի երկու կամարները:

Մարմաշենի կաթողիկե եկեղեցուց հարավ-արևմուտք բացվել է շինություն, որն իրենից ներկայացնում է քառանկյունի 3X4 մ չափերի բաղակապ ծածկով երկու սենյակ: Գտածոներից և գրավոր տեղ եկություններից դատելով այն ակներևաբար ծառայել է թաղման արարողությունների համար:

Ֆիրաշեն բնակավայրում պեղվել են միջնաբերդի երկու սենյակներ: Պեղվել է բնակավայրի արևելյան մասի բնակարանային համակառույցներից մեկը:

Ֆիրաշենը իրենից ներկայացնում է կայազորային տիպի ամրոց՝ կառուցված մոտ 100 մ երկարություն և 40 մ լայնություն ունեցող հրվանդանի վրա: Մուտքը կրկնակի է, երկու կողմից պաշտպանված է կիսաբոլորակ աշտարակներով: Ամրոցի կենտրոնով երկայնակի ճգվող միջանցքի երկու կողմերում տեղադրված են $30-40 \text{ m}^2$ մակերես ունեցող սենյակներ, որոնք ծառայել են որպես զորանոցներ: Ամրոցի մուտքը փակվել է քարե դռնով: Ամրոցը գոյություն է ունեցել տակավին վաղ նշական ժամանակներից:

Խ.Ա. ՄԱԻԾԵՂՅԱՆ
ՀԱՍՏԱԴՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԻՏԱԿԱՆ ՀԱՐՄՈՆԵՐԻ

ԱՆԻ - ԴՐԱՆ

Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվում են 1793 պղնձե և արծաթե հին ու միջնադարյան մետաղե դրամներ՝ գտնված Անի քաղաքում։ Դրանք գտնվել են ինչպես հնագիտական պեղումների շնորհիվ, այնպես էլ պատահականորեն՝ հին քաղաքի տարածքի վրա։ Այդ նյութերի քննություններն ավարտվել են և ստացված արդյունքները հնարավորություններ են ընձեռում դատելու Անի քաղաքի դրամական տնտեսության մասին, ինչպես նաև այն համեմատելու՝ Դվինում հայտնաբերված նմանօրենակ նյութերի հետ։

Միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքներ՝ Անիում և Դվինում տարածված դրամների համադրությունը կարող է լույս սփռել պարզելու ոչ միայն ընդհանրություններն, այլև այն տարբերությունները, որոնք բնորոշ են եղել նրանցից յուրաքանչյուրի դրամական շրջանառության ներքին ոլորտին։ Բացի զուտ դրամագիտական բնույթի հարցերից, որոնց համար հարուստ նյութեր են պարունակում Դվինում և Անիում գտնված դրամները /պատկերագրության, չափագիտության, տարեթվերի նշման սկզբունքներ, հնագրության, տեղական կերտվածքի և այլ խնդիրներ/ վերջիններս իրենց հիմնական խմբերով միաժամանակ արտացոլում են Այրարատի ու Շիրակի քաղաքական-տնտեսական պատմության գլխավոր փուլերը, հիշատակում՝ նրանց ուղղակի և անուղղակի կապերը մոտակա և հեռավոր շուկաների հետ։ Դվինում գտնված դրամները /2036/ նույնպես պահվում են Հայաստանի Պատմության պետական թանգարանում։

Անիում և Դվինում գտնված դրամագիտական նյութերն իրենց ծագման տվյալներով ստորաբաժանվում են ավելի քան երկու տասնյակ տիպային տեսակների, թողարկված տարբեր պետությունների կողմից։ Դրանց շարքում գլխավորները Դվինի համար հանդիսանում են՝ սասանյան ու բյուզանդական 5-7-րդ դդ., Արաբական խալիֆայության /Օմայան և աբբասյան/ 8-10-րդ դդ., թուրք-սելջուկյան 11-13-րդ դդ. դրամները։ Ի տարբերություն Դվինի՝ Անի քաղաքի դրամական տնտեսությանը բնորոշեն՝ բյուզանդական 10-11-րդ դդ., թուրք-սելջուկյան 12-13-րդ դդ. և մոնղոլական ծագում ունեցող 13-14-րդ դդ. դրամները։

Մնացյալ դրամները /մակեղոնական, փյունիկյան, հին հայկական, հռոմեական, արաբական և այլն/ չնչին քանակություն են ներկայաց-

Նում՝ գտնված հատուկենտ նմուշներով և պառահականություններ ՀՀինելով Մեծ Հայքի տարածքում, այդուհանդերձ զանգվածային տարածում և տևական շրջանառություն չեն ունեցել ոչ Անիում և ոչ էլ Դիբինում։ Ի եարբերություն Դիբինի՝ սասանյան, Օմայան և աբբասյան ղրամների գրեթե կատարյալ բացակայությունը Անիում յուրովի խոսում է նրանց Շիրակում ունեցած աննշան դերի մասին։ Այդ իրողությունը միաժամանակ հաստատում է գրավոր հաղորդումների իսկությունը Դիբին և Անի քաղաքների պատմության նախաբազրատու նյաց շրջանի վերաբերյալ։

Դրամագիտական նյութերի համադրությունը բացահայտում է նաև մեկ այլ ուշագրավ հանգամանք։ Դա Անի և Դիբին քաղաքներում, մասնավորապես նրանց ներքին շուկաներում տարածված բյուզանդական 10-11-րդ դդ. պղնձե ղրամների դերի ու նշանակության հարցն է։ Անիում բյուզանդական ճագում ունեցող 10-11-րդ դդ. պղնձե ղրամները զանգվածային տարածում են ունեցել։ Մինչդեռ Դիբինում ղրանք համեմատաբար չնշին քանակություն են կազմում։ Տարբերությունը նշվում է 30:1 հարաբերությամբ։ Բյուզանդական պղնձե ղրամներից Անիում առավելապես տարածված են եղել Հովհաննես ԶՄՀԿ /969-976/, Վասիլ II և Կոստանդին VIII /976-1025/, Միքայել IV /1034-1041/, Թեոդոր /1055-1056/, ինչպես նաև Կոստանդին X և Եղիշոկիա /1059-1067/ պատկերներով ֆոլիսները։ Այդ ամենից բացի, Անի-Դիբին ղրամագիտական նյութերի համադրությունը ցույց է տալիս նաև մի կարևոր, թեև քանակապես ոչ մեծ նշանակություն ունեցող, վկայություն։ Դա Եղեսիա քաղաքում 12-րդ դարում խաչակիր ասպետների կողմից թողարկված պղնձյա ղրամների /24/ առկայությունն է Անիում հայտնաբերված միջնադարյան նյութերի հոծ զանգվածում։ Դրանք հյուսիսային Միջագետքից Շիրակ են թափանցել հավանաբար ոչ ուղղակիորեն՝ Եղեսիա-Անի գծով, այլ բացառված չեն նաև, որ Անտիոքում և Կ.Պոլսում ղրվագված բյուզանդական ղրամների հետ միասին, ըստ որում Անիում գտնված բյուզանդական ղրամներն առավելապես Կ.Պոլսում և Անտիոքում թողարկված Օրինակներն են։ Ուշագրավ է նաև, որ Դիբինում բացակայում են խաչակիր ասպետների ղրամները, այսինքն ևս մի տարբերություն, որը նկատելի է դաւնում զարգացած միջնադարի հիշյալ երկու քաղաքների ղրամագիտական նյութերի համադրությունից։ Թողնելով երկու քաղաքների համար ընդհանրություն ներկայացնող 12-13-րդ դդ. վրաց բազրատու նյաց ղրամների գործառական նշանակության և տիպային տեսակների հարցերը, մասնավորապես թամար և իրու սուղան թագու հիների Օրոք թողարկված ղրամների, որոնք հավասարապես տարածված են

եղել թէ Անիում և թէ Դվինում, արդեն մոնղոլական տիրապետության ժամանակներում այդ ընդհանուր կապը նորից խզվում է։ Անիում մոնղոլական ծագում ունեցող 13-14-րդ դդ. դրամները նշանակալից տարածում են ունեցել։ Դրանք շրջանառության մեջ մտել են Մանգու, Արդուն, Ղազան Մահմուդ, Մուհամմեդ Խուդաբենդա, Աբու-Ասյիդ, Սուլեյման և Նուշիրվան խաների օրոք։ Դվինում ընդհակառակը՝ մոնղոլական դրամները հազվագյուտ են և դա պատահականություն չէ։ Խորեզմից շահ Ջալալ-ադ-դինի և այնուհետև մոնղոլական զորքերի կողմից ավերված Դվինը 13-րդ դ. վերջին անվերադարձ կորցրել էր իր քաղաքային կյանքի մեջ կենտրոն լինելու նշանակությունը։ Դվին և Անի քաղաքներում գտնված դրամների գլխավոր խմբերի համադրությունը ուշագրավ պատկեր է ներկայացնում։

Ռ.Հ.ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ա.Ա. ՔԱՄԻԹԱՐՅԱՆ
ԿԱՂ ԲՅՈՒՀԱՆԱԿԱՆ ԴՊԱԱ-ԿԱՐԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ
ՇՈՒԽԵՆԵՐ ԴՎԻՆԻ ԿԵՂՈՒԽԵՐԻԾ

1. Միջնադարյան հայաստանում Օգտագործված կշռի միավորների մեծությունները որոշելիս առաջնակարգ նշանակություն են ստանում հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերված նմուշները, որոնց հիման վրա դրամակշռային համակարգի միավորները վերածվում են ժամանակակից կշռային միավորների։ Այդպիսի նմուշներ գտնվել են Հայաստանի միջնադարյան խոշորագույն առևտրարկեստավորական կենտրոններում՝ Դվինում և Անիում։

2. Դվինի վաղ միջնադարյան շերտերից, որոնք թվագրվում են 5-7-րդ դդ., հայտնաբերվել են ապակուց երեք դրամաչափ – կշռաչափի նմուշներ, խաչազարդ դրոշմվածքով։ Այդ էտալոնները լավ պահպանված են և ունեն 4,52 գ, 4,52 գ և 4,40 գ քաշ։ Նմուշների խաչազարդի ճախ թերթի ծայրերին նշված են հունական N / 2 Օրինակում / և Σ / մեկ Օրինակում / տառերը, որոնք համապատասխանում են նոմիսմա-հքսագիռն համարժեք միավորների առաջին տառերին։ Այլ խոսքով դրանք բյուզանդական նոմիսմա-հքսագիռնի պահպանված Օրինակներ են, որոնք կիրառվել են ոսկե դրամի կշիռը ստուգելու համար և ծառայել են որպես կշռի միավորներ։

3. Դվինի միջնաբերդում բացված 5-6-րդ դդ. թվագրվող ոսկերչի արհեստանոցից գտնվել է բրոնզե կլոր կշռաքար, որի վրա արձանագրված է նրա քաշը՝ $N \neq B$, այսինքն՝ նոմիսմա 12։ Այն կրկնակի ունկի է և 45,86 գրամ է /մաքրած վիճակում/։ Նույն վայրում հայտ-

նաբերվել է նաև ապակե էքսագիոնի մեկ Օրինակ, մոզայիկ ապակուց բըրգաճե մի կշռաքար /14,75 գրամ/, ոսկու ձույլ կտոր /8,4 գրամ/ և այլ իրեր: Դվինում և Հայաստանի այլ վայրերում գտնվել են բյուզանդական ոսկե դրամներ, որոնց քաշերը /4,2 – 4,5 գ/ համապատասխանում են ապակե նոմիսմա-էքսագիոնի քաշերին:

4. Նոմիսմա-էքսագիոնի նմուշների, բրոնզե կշռաքարերի, մոզայիկ ապակուց և քարից պատրաստված բրգաճե իրերի առկայությունը ցույց է տալիս, որ Հայաստանում /մասնավորապես Դվինում/ ոսկերչության և արծաթագործության մեջ վաղ միջնադարից լայն կիրառություն է ստացել բյուզանդական դրամակշռային համակարգը: Ընդունելով հավասարաշափ բաշխումը և կիրառելով մաթեմատիկական վիճակագրությունում Օգտագործվող 95 տոկոսանոց հուսալիության սահմանը նոմիսմա-էքսագիոնի մեծությունն ըստ գտնված նմուշների կլինի $4,45 \pm 0,08$:

5. Հայաստանում, ըստ մատենագրական տվյալների /իորենացի, Եղիշե, Հ.Մամիկոնյան, Ղևոնդ, Կաղանկատվացի և ուրիշներ/ բյուզանդական ոսկե դրամը անվանվել է հիմնականում ղաճեկան: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ղաճեկանը կազմել է համակարգ՝ տարբեր միավորների հետ ունենալով որոշակի հարաբերություն: Ղաճեկանը և նրա համակարգի մեջ մտնող միավորները Հայաստանում կիրառվել են կոստանդին Անդրեաս 324 թ. դրամական բարեփոխումից հետո և Օգտագործվել են ընդհուպ մինչև 15-րդ դարը:

6. Բյուզանդական ոսկե դրամի ապակե և բրոնզե նմուշներ գտնվել են կայսրությունում և նրա ենթակա երկրների տարածքում /Եգիպտոս, Սիրիա, Բուլղարիա, Իումինիա ևն/: Հայրենական հնագիտության մեջ նոմիսմա-էքսագիոնի առանձին նմուշներ հայտնի են Ղրիմի և Վըրաստանի հնավայրերից:

7. Հնագիտական նյութերը, հատկապես նմուշները, մեծ չափով օգնում են ոչ միայն բացահայտելու դրամակշռային համակարգի առանձին միավորների մեծությունները, այլև միջնադարյան հայ մատենագրության մեջ դրամակշռային միավորներով արտահայտված յուրաքանչյուր վկայություն, որը հետաքրքրություն է ներկայացնում սոցիալ-տնտեսական հարաբերությունների և մշակույթի պատմության համար:

ԸՂՐԱՀԱՅՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՄ ՊԱՏՍԱԿԱՆ
ԿԱՐԵՐԻ ՍԱՄԻՆ

ԼՀՍԹ ՄՈՍԿՎԱՅԻ և ԼԵՆԻՆԳՐԱԴԻ արձանագրական
ՆՅՈՒԹԵՐԻ/

Հայկական ՍՍՀ ԳԱՅ ՀՆագիտության և ազգագրության ինստիտուտի
վիմագրական խմբարշավը վերջին տարիներս լայն հավաքչական աշխա-
տանքներ է ծավալել Ռուսաստանի, Ռւկրաինայի և Մոլդավիայի նախկին
հայկական գաղթավայրերում արձանագրագիտական նյութեր հավաքելու
ուղղությամբ։ Շուրջ մեկ հազարի հասնող վիմագրություններն ու
բանգարանային իրերի մակագրությունները արժեքավոր վկայություն-
ներ են պարունակում հայկական գաղթավայրերի հասարակական-քաղաքա-
կան, տնտեսական և մշակութային բնագավառների վերաբերյալ։ Այդ ար-
ձանագրությունների շարքում առանձնակի արժեք են ներկայացնում
կրեմլի Զինապալատի և Պատմության կենտրոնական թանգարանի ֆոնդերում
պահպանվող ցուցանմուշների մակագրությունները, որոնք կատարված են
թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով ընդելուզված ուկյա և արծաթ-
յա խաչերի, քուրվառների, քշոցների, մասնատուփերի, խույրերի, սկա-
նակների, լվացարանների և այլ առարկաների վրա։ Ռւսումնասիրություն-
ները ցույց են տալիս, որ դրանք պատրաստված են 15-19-րդ դարերում
Աստրախանում, Ղզլարում, Ղրիմում, Նոր Շախիջևնում և այլ հայկական
գաղթօջախներում։

Մեծ թիվ են կազմում մեմորիալ բնույթի արձանագրությունները,
որոնց մեջ հիշատակվում են հայազգի ականավոր զինվորականներ / Լազար-
յաններ, Հաստատյաններ, Մելիքյաններ, Աբամելիքներ, Ակիմյաններ,
Դաղյաններ և այլք /, գիտնական-մանկավարժներ / Մ. Եմին, Գր. Խալաթյան,
Գր. Ջանշյան, Ք. Պատկանյան, Մսեր Մսերյան, Ստ. Հազարյանց և այլք /,
ազնվական բոյարներ / Հայրապետյան /, հոգեոր գործիչներ, առևտրական
դասի ներկայացուցիչներ, արհեստագործներ և ուրիշներ։

Լենինգրադի արձանագրություններում հետաքրքիր վկայություն-
ներ են պահպանված Բորոդինոյի և Լեյպցիգի ճակատամարտերին մասնակ-
ցած հայ զինվորականների մասին / Փիրալյաններ, Լազարյաններ / : Հայ-
ուուսական մշակութային կապերի հաստատման և ամրապնդման գործում
առանձնակի դեր են կատարել Գրիգոր Խալդարյանն ու Կլեոպատրա Ապրաֆ-
յանը, որոնք հիմք դրեցին Ռուսաստանում առաջին հայ տռագրությանն
ու անդրանիկ դասագրքերին։ Այսպես հիշատակվում է Խալդարյանների

որդեգիր, 18-րդ դարի ականավոր գործիչ Հարություն Արարատյանի մասին:

Մի շարք հայատառ արձանագրություններ են պահպանվել Հենինգրադի ԱԼ. Ըստկու մենաստանի / լավրա/սրահներում տեղակայված հայկական կոթողային հուշարձանների վրա: Ակադեմիկոս Մարտոսի ճեռքով կերտված՝ Լազարյանների խմբանդակի տարբեր հատվածներին ագուցված են մարմարակերտ սալեր, որոնց հայերեն և ռուսերեն արձանագրությունները պատմում են Հեյպահիգի 1813 թ. ճակատամարտում զոհված 22-ամյա պրեմիեր-մայոր Հարություն Լազարյանի մասին: Մոսկվայի Լազարյան ճեմարանում պահպանվող պղնձյա թիթեղի վրա փորագրված է այս նշանավոր ուսումնական հաստատության զարգացման առանձին փուլերի մասին համառոտ հիշատակագրությունը, իսկ ճեմարանի մուտքի առջև մինչև Օրս վեր է խոյանում Լազարյան իշխանների մեծագործությունը խոր հրդանշող կոթող-սյունը, որի չորս կողմերին փորագրված են ԱԼ. Մերզլյակովի բանաստեղծությունների քառյակները:

ՈՍՖՈՀ-ի տարածքում հայտնաբերված վիմագրությունները, իբրև պատմագիտական հավաստի սկզբնաշեյուրներ, մեծապես նպաստում են հայուսական դարավոր կապերն առավել առարկայական դրանելու և լուսաբանելու գործին:

Հ. Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿԱՐԵՒԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՄԲԵՐՎԱԾ ԶԻՆԱԿԱԾ ԽԵօԵՂԵՆԸ

1. Գառնիի պեղումները տվել են չինական խեցեղենի մոտ երկու տասնյակ բեկորներ, որոնց մեջ մեծամասնություն է կազմում սելադոնը: Անիից հայտնի չինական խեցեղենի կողքին այդքանակ բեկորների երեսն գալը խիստ ուշագրավ է, եթե նկատի ունենանք, որ Դվինի պեղումներից այդպիսիք հայտնի չեն: Գառնիում դրանք գտնվել են միայն վերին շերտերում և թվագրվում են 13-րդ դ. 2-րդ կեսով և 14-րդ դարով:

2. Սելադոնի քննարկվող նմուշների մեջ մասը պատկանում է լունցյուան-յառ տիպին: Դրանք լայն հորիզոնական պսակներով խոր թասերի բեկորներ են, հարդարված բուսական և երկրաչափական զարդերով: Սելադոնների հաջորդ՝ գե - յառ տիպը ներկայացված է մի քանի բեկորով, որոնց խեցին ավելի մոխրագույն է, իսկ որպես զարդանախշող հիմնական տարր հանդես են գալիս կրակելյուրները: Գառնիում

գտնվել են նաև „Հյուսիսային սելաղոնի”, ինչպես նաև Մերձավոր Արևելքի խեցեգործական կենտրոններում պատրաստված՝ սելաղոնի նմանակումներ հանդիսացող բեկորներ :

3. Գտնվել է նաև „կապույտ և սպիտակ”, տիպին պատկանող երկու բեկոր : Դրանցից մեկը ճենապակյա անորի բեկոր է՝ կարծր, սպիտակ կիսաթափանցիկ խեցիով : Երկրորդ բեկորի խեցին մոխրագույն է : Նախշազարդումը կատարված է սև ներկի մազագծերով և կապույտ ցայտերով : Ինչպես ցույց են տվել կարա-կորումի և հատկապես իարա-խոտոյի պեղումները կոբալտի տարբեր երանգներով զարդանախշված խեցեղ ենն արդեն 14-րդ դարավորված արտահանվում էր Չինաստանից :

4. Գտնիի չինական սելաղոնը իր տիպերով, զարդանախշումով ընդհուպ մոտենում է, երբեմն նույնանում Անիում գտնված սելաղոններին : Գտնիում դրա հստակ թվագրումը 13-րդ դարում կեսով և 14-րդ դարով, Դվինում նման խեցեղ ենի բացակայությունը հարավոր է դարձնում վերանայել Անիի չինական սելաղոնի թվագրությունը /12-րդ դար և 13-րդ դարի սկիզբ/, որն առաջարկել է Բ. Շելկովնիկովը և հավանական համարել Գտնիի գտածոների հետ նրա համաժամանակյա լինելը : 13-րդ դարում կեսին և 14-րդ դարում չինական խեցեղ ենի ներմուծումը հայաստանի տնտեսամշակութային կյանքի անկման պարագաներում պայմանավորված էր մոնղոլների ընդարձակածավալ նվաճումներով, երբ հեռավոր Արևելքի հետ բավականին դյուրացած քարավանային առևտուրը չինական խեցեղ ենը լայնորեն արտահանում էր Միջին Ասիա, Մերձավորակա, Մերձավոր Արևելք և Արևմտյան Եվրոպա :

Ա. Գ. ԱՍՍԵԹԱՆ

ԱՐԳԻՇՏԻԽԻԾԻ ՍԻՋԱՄԱՐԺԱՆ ԻՇՈԵՂԵՆԸ

Արգիշտիխինիլի քաղաքի արևմտյան ամրոցը կործանումից հետո բնակեցվել է զարգացած միջնադարում : Նոր բնակավայրը զբաղեցնում է ուրարտական քաղաքի միջնաբերդի ողջ տարածքը և ունի 4,5-5 համակերես : Դեղումների միջոցով բացվել են 9-14-րդ դար թվագրվող երեք շինարարական շերտեր, որոնք ունեն 1-2,5 մ ընդհանուր հզորություն : Այստեղ հայտնաբերվել են ճարտարապետական համալիրներ, քաղացած բնակելի, տնտեսական ու կենցաղային շինություններից :

Արգիշտիխինիլի միջնադարյան շերտերից հայտնաբերված հնագիտական նյութերի հավաքածուի մեջ ստվար բաժին է կազմում խեցեղ ենը, որը բաժանվում է մի քանի խմբի : Հասարակ խեցեղ ենը ներկայաց-

վաճ է տնտեսական և խոհանոցային կիրառություն ունեցող կարասներով, կճուճներով, թասերով, գավաթներով և կենցաղային առօրյա կիրառություն ունեցող այլ առարկաներով։ Ձևարակածը՝ տարբեր տեսակի, երկրաշափական ու բուսական զարդեր կրող մեծ ու փոքր սափորներով, քրեղաններով, թասերով և այլ անոթներով։

Տեղական արտադրանքի նմուշներից բացի Արգիշտինի լիում գտնվել են նաև այլ երկրներից ներմուծված խեցեղենի որոշ Օրինակներ, որոնք ցույց են տալիս ուսումնասիրվող միջնադարյան բնակավայրի ունեցած կապերը շրջակա քաղաքային խոշոր կենտրոնների հետ։ Արգիշտինի լիի բնակավայրից հայտնաբերված հնագիտական նյութերը կարևոր են Արարատյան դաշտի միջնադարյան բնակավայրերի նյութական մշակույթի պատկերն ուրվագծելու համար։

Ա.Ա. ՔԱՂԱԿԱՆԻՉՅԱՆ, Կ.Կ. ՂԱՖԱՂԱՄՅԱՆ,

Հ.Կ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ֆ.Ա. ԲԱԲԱՅԱՆ,

Ա.Ա. ԺԱԿՈՎՅԱՆ, Հ.Մ. ԽԱՆԳԻՇՄԵՂՅԱՆ

ԴՐԱՆԻ ՊԵՂՈՒՍՆԵՐԻ ՀԻՄԱԿԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

/1981-1982 թթ./

1. 1981 և 1982 թթ. աշխատանքները շարունակվել են կենտրոնական թաղամասի և միջնաբերդի նախորդ տարիներին պեղվող հատվածներում։ 1982 թ. վերսկսվել են պեղումները միջնաբերդի գագաթի վաղ միջնադարյան և հելլենիստական շերտերում։

2. Կենտրոնական թաղամասում պեղումները կենտրոնացվել են 5-րդ դարական շինության արևմտյան և հարավային մասերում։ Արևմտյան մասում, դեռ 1980 թ. բացված կրակապաշտական ատրուցանի շրջակայթում ընդարձակվեց պեղավայրը տաճարական կոմպլեքսի սահմանները որոշելու նպատակով։ Սակայն 9-րդ դարի աշուսացեն պատերի առկայությունը առայժմ հնարավորություն չեն ընկերում հստակություն մտցնել տաճարի հասակածային պատկերի մեջ։ Հստ երևոյթին թ-րդ դարի վերջից այս հատվածը խիստ կառուցապատվել է, իր տակ թողնելով ավերված պալատն իր հարկաբարձրություն պատկերը դիտվում է նաև հարավային մասում։ Ներտագրական կտրվածքներն այստեղ երևան են բերում մի քանի հատակներ, որոնք վեթաբերում են 8-13-րդ դար շինություններին։ Բավականին լավ պահպանվել են 9-րդ դարի շինությունների պատերը աշուսացար հատակներով, հորերով և

Հնագիտական նյութով:

3. Ստորին բերդում շարունակվում է բացվել արհեստավորական խաղամասի չորրորդ մեծ շինությունը կավաշեն պատերով: Անյակների մի մասը տերրասաձև բարձրանում է բլրի լանջով: Գտնված նյութերը ցույց են տալիս, որ 12-13-րդ դդ. Դիմինում բուռն զարգացում են ապրել քաղաքային կյանքը, արհեստագործությունը, առևտուրը: Պիեղումների հետևանքով բացվում են աշխարհիկ բնակելի տների հետաքրքիր տիպեր, տնտեսական և արհեստավորական բաժանմունքով: Շերտերը շատ հստակ թվագրվում են վրացական և ելտկուզյան դրամներով, ինչպես և ջնարակած խեցել ենով:

4. Միջնաբերդի հարավային բուրգի հատվածում մեծ աշխատանք է կատարվել գիպսե սվաղով մոնումենտալ շինության թվագրության հարցերի ճշտման ուղղությամբ: Հստ երեսու յիշին այդ շենքի կառուցվել է 9-10-րդ դդ.: Պատերի արտաքին երեսը բացվել է մոտ 45 մ երկարությամբ, որոշվել է պատի հաստությունը՝ 2,5 մ: Ենքի հետ միասին որոշվում է նաև բուրգի և պարսպի մի հատվածի թվագրության հարցը: Պիեղումները ցույց տվեցին, որ դրանք դրված են կրաշաղախ պատերի վրա և կառուցվել են 11-րդ դարից հետո, հավանաբար մուսուլման էմիրների տիրապետության ժամանակ: Այս հատվածում հստակ ընդգծված են շինարարական երկու հորիզոններ՝ 9-11-րդ դդ. և 12-13-րդ դդ., որոնք թվագրվում են հնագիտական նյութով և դրամներով:

5. Քաղաքի վաղ միջնադարյան և հելլենիստական շրջանի նյութերի թվագրության և շերտագրության առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում միջնաբերդի գագաթի ստորին շերտի պեղումները: Հիմնական աշխատանքները կենտրոնացվել են 4-րդ դարի գահանիստ ղահլիճի հյուսիսային հատվածում, որտեղ բացվել են քառակուսի վերնասալով երկու մեծ խարիսխ պատի հատվածով: Այս մասում 4-5-րդ դդ. ղահլիճին կից եղել է ինչ-որ մոնումենտալ շինություն, որը ավերվել է հետագա շինարարական գործունեության հետևանքով: Անմիջապես այս շերտի տակ, մոտ 1,5 մ հաստությամբ բացվում են մ.թ.ա. 2-րդ - մ.թ. 1-ին դդ. շերտերը, հագեցված հելլենիստական գունագարդ և հասարակ խեցել ենով: Պատերի մնացորդները թույլ են տալիս վերստին հասսատել այստեղ շինարարական համալիրների առկայության փաստը: Ան նաև աշխատանքներ տարվեցին նաև գահանիստ ղահլիճի հատակների ճշտման ուղղությամբ:

6. Պիեղումների ժամանակ գտնված նյութերը, հատկապես ջնարակած

շեցեղ ենը և դրամները, շերտագրական տվյալները հնարավորություն են
ընձեռում ճշտելու Դվինի ժամանակագրական պատկերը, տալ յուրաքան-
չյուր ժամանակաշրջանի բազմակողմանի բնուխագիրը:

Ա. ՏԵՌ-ՍԻՆԱՄԱՅԱՆ

ԹԱԼԻՆԻ, ԵԵՆԱԿԱՆԻ ԵՎ ՄԻԴԱՒԻ ՄԻԱՅԱՆ ՄԻԱԿԱՎՈՐ ԸՆԾԵՍԻՆԵՐԸ

Կիտական գրականության մեջ բազմիցս հիշատակված և հանրահայտ
սրահավոր եկեղեցիների հետ մեկտեղ Հայաստանում կան համանման բազ-
մանիվ եկեղեցիներ, որոնք մինչև նրա ուսումնասիրված չեն: Ներկա
հաղորդման առարկան հանդիսանում են այդպիսի երեք հուշարձաններ,
որոնք մեր կողմից չափագրվել և ուսումնասիրվել են 1981-1982 թթ.:

Առաջինի - Թալինի /Թալինի շրջան/ սրահավոր եկեղեցու սխեմա-
տիկ հատակագիծը հրապարակված է 1973 թ. հայ ճարտարապետության իտա-
լացի ուսումնասիրող Պաոլո Կունեոյի կողմից: Այդ հուշարձանը եռ-
աստիճան ստիլոբատի վրա դրված արևմուտք-արևելք առանցքով գտնվում
է կիսաշրջան աբսիդը, որը դրսից ներգծված է արտաքին պատերի ուղ-
ղանկյուն ուրվագիծի մեջ: Մուտքը գտնվում է արևմտյան կողմում: Հու-
շարձանը ծածկված է եղել հավանաբար քարե բաղով: Այդ մասին են վկա-
յուն երկու զույգ որմնամույթերը, որոնցից պահպանվել են միայն վաղ
միջնադարի համար շատ բնորոշ պրոֆիլավորված խրիստոնեություն: Հու-
շարձանի ոճական առանձնահատկությունները, ինչպես նաև նրա համեմատությու-
նը այդ դարաշրջանի հայկական նույնատիպ հուշարձանների հետ բույլ
են տալիս թվագրել այն 5-6-րդ դարերով:

Երկրորդ հուշարձանը գտնվում է Շենավան գյուղում /Սպիտակի
շրջան/: Նրանից պահպանվել է միայն արևելյան պատը աբսիդով մոտավո-
րապես 2 մ բարձրությամբ և, մասամբ, ստիլոբատի առաջին աստիճանը:
Եկեղեցու պատերը արևմտյան կողմում ծածկված են հողով, այդ պատճա-
ռով այժմ դժվար է պարզել նրա ճշգրիտ չափերը: Դատելով պահպանված
արևելյան ճակատի չափերից, հուշարձանի արտաքին լայնքն է 7,3 մ,
երկայնքը՝ 11 մ-ից ավել: Հուշարձանը կառուցված է կարմրավուն և
մոխրագույն սրբատաշ տուֆից: Այս եկեղեցին տարբերվում է նույնա-
տիպ վաղ միջնադարյան հուշարձաններից նրա աբսիդի երկու կողմե-
րում գտնվող /հուշարձանի երկայնական առանցքին սիմետրիկ/ 1,3 մ և
1,15 մ խորություն ունեցող խորշերով: Աբսիդի հատակից նրանց բարձ-

բությունն է 1,7 մ: Թվում է, թե դրանք կառուցված են արսիղի շինության հետ միաժամանակ: Հուշարձանը կարող է թվագրվել 5-6-րդ դարերով:

Երրորդ սրահավոր եկեղեցին գտնվում է Միրաֆ գյուղում /Արագածի շրջան/: Հուշարձանից պահպանվել է միայն հողով կիսածածկ աքսիդը և հարավային պատից՝ 0,95 մ երկարությամբ հատված, որի վրա գտնվում է 1,00 մ լայնություն ունեցող մուտքի բացվածքը: Եկեղեցին կառուցված է կարմրավուն և սև սրբատաշ տուֆից: Այս հուշարձանը ուշագրավ է իր դեկորատիվ հարդարանքով, որի մասին մենք կարող ենք դատել եկեղեցու շուրջը բափկած բեկորներով: Նրանց մեջ է անտիկ ծագում ունեցող ատամնավոր քիվի բեկորը, զարդաքանդակի բեկոր թերթիկներից և եռանկյունիներից կազմված խաչի ձևով և, վերջապես, մի կտոր քարի /գուցե մուտքի բարավորի/ վրա քանդակված զույգ-զույգ միացված շրջանագծերի մեջ ներգծված չորս հավասարաթև խաչեր: Այս բուլոր հատկանիշները բնորոշ են 4-5-րդ դարերի ճարտարապետության համար և թույլ են տալիս Միրաֆի սրահավոր եկեղեցին թվագրել այդ դարերով:

Գ. Գ. ՍՄՐԴՄՅԱՆ

ԹԵՂԵՆՑԱԾ ՎԱՐԺԻ 1982 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Պեղման աշխատանքները կատարվել են գավթի արևելյան կողմում, որին կից բացվեց արտաքուստ ուղղանկյուն, ներսից զույգ որմնամույթերով, կենտրոնագմբեթ եկեղեցի /10×15 մ/:

1. Եկեղեցու արևելյան կողմում կիսաշրջան արսիղն է կողային զույգ ավանդատներով: Վերջիններս իրենց հատակագծային կառուցվածքով տարբերվում են ավանդատների ընդունված ձևերից, քիչ լայնանալով արևելյան կողմում: Աբսիդի երկու անկյունները հարդարված են եռանիստ որմնասյուներով, որոնց ստորին մասը մնացել է բեմի տակ: Եկեղեցու պահպանված պատերը հասնում են մինչև 2,5 մ բարձրության, հատակն ամբողջովին պատված է կարմիր և սև տուֆե սրբատաշ սալերով: Սալահատակը թերևս նախնական չէ, քանի որ դրա տակ նշմարվում են սկզբնական հատակի նույնպես սրբատաշ սալահարերը: Տաճարի հիմնական մուտքն արևմտյան կողմից է, երկրորդ մուտքով կառույցն հարավից հաղորդակցվում է ենթադրյալ գրապահոցի հետ:

2. Եկեղեցու ամենաուշագրավ հատվածը բեմի ճակատամասն է: Այն բաղկացած է քառակուսի և ուղղանկյուն, 25 սմ հաստությամբ, 6 քարերից, որոնց մակերեսը ամբողջովին քանդակագարդված է երկրաչափական,

բուսական և կենդանական մոտիվներով։ Կենտրոնական քարի վրա ամբողջ շքեղությամբ, դիմացից, քանդակված է թևերը կիսաբաց կողքերից իջնող, գլուխը հարավ թեքած սիրամարգ, որի լրիվ բացված պոչը, ամբողջովին ներկալված է քարը եզրագծով բազմաժապավեն շրջանագծի մեջ։ Թռչունի գլխին սիրամարգերի պատկերումներին բնորոշ ոճավորված կատարն է։ Ճակատամասի մեկ այլ քարի վրա քանդակված է արև և հավերժություն խորհրդանշով պատկեր։ Կենտրոնական փոքր վարդյակից տարածվում են կորագիծ ճառագայթները, որոնց ճայրին նույնպես վարդյակներ են քանդակված։ Ուշագրավ է նաև սիրամարգի քանդակին հյուսիսից քարի վրայի զարդապատկերը։ Այստեղ վեցանկյուն աստղի կենտրոնում պատկերված է կտուցը թևին իջեցրած թռչունի քանդակը։

3. Պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին հասարակ և ջնարակած խեցեղենի բազմաթիվ մնացորդներ։ Հասարակ խեցեղենը ներկայացված է ինչպես խոհանոցային անոթների՝ քրեղաններ, կճուճներ, թասեր և այլն, այնպես էլ մեծ կարասների, ձիթաճրագների նմուշներով։ Հանդիպում են ինչպես սև ու կարմիր փայլեցված և չփայլեցված, հաստու կոպիտ, ինչպես նաև բարակ ու նուրբ պատրաստված անոթներ։ Հայտնաբերվեցին դրոշմազարդ գոտիով մեծ կարասի չորս բեկոր։ Մոտ 5 սմ լայնություն ունեցող գոտու վրա պատկերված է եղջերուի, կենաց ծառի և թռչունի զուգորդմամբ զարդապատկերներ։ Այս տիպի կարասները, որոնք հայտնի են նաև Անիի, Դիլինի, Ամբերդի պեղումներից, այստեղ թվագրվում են 11-13-րդ դդ։։ Դատելով այդ բեկորների վրա կպած կրաշաղախի մնացորդներից, դրանք օգտագործվել են եկեղեցու գմբեթի կառուցման ժամանակ՝ ճաճկի թեթևության և այնի հնեղության նպատակով։

Թեղենյաց վանքի պեղումներից գտնված ջնարակած խեցեղենի նմուշները անհամեմատ սակավ են։ Սրանք հիմնականում միագույն՝ կանաչ, կապույտ, երկնագույն թասերի բեկորներ են։ Այս խեցեղենի մեջ առանձնանում է երկնագույն ֆոնի վրա սև բուսազարդով թասի հատակի մի բեկոր, որը կարող է թվագրվել 12-13-րդ դդ։։ Ջնարակած խեցեղենի մյուս նմուշները պվելի ուշ են թվագրվում՝ 14-16-րդ դդ։։ Գտածուների մեջ շատ փոքր է մետաղից և ոսկրից պատրաստված առարկաների թիվը։ Առանձնանում է երկաթե փոքր կողպեքը, ինչպես նաև այնի եղջյուրից պատրաստված կտուտիչը։

4. Եկեղեցին ներքուստ լրիվ մաքրելու շնորհիվ ի հայտ եկած ճարտարապետական մանրամասները ցույց են տալիս, որ այն կառուցվել է 11-րդ դարում, իսկ հետագայում, առնվազն երկու անգամ բեմը, սա-

լահատակը և մի շարք այլ հատվածներ նորոգման կամ վերակառուցման են ենթարկվել։ Առաջին վերակառուցման ժամանակ, որն ըստ երևույթին տեղի է ունեցել 13-րդ դարի սկզբներին /երբ կատարվել է գավթի շինարարությունը/ նոր բեմ է կառուցվել։ Այդ դարով են թվագրվում նաև բեմի ճակատամասի զարդարանդակները։ Հավանաբար հիշյալ դարի երկրորդ կեսում կամ վերջում հին սալահատակի վրա կառուցվել է նորը, որը մոտ 10 սմ ծածկում է քանդակագարդ բեմի ճակատաքարերի ստորին մասերը։

Ե.Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ԹԱԼԻՆԻ ՄԻԽԱՂԱՄԱՆ ՀՈՒՅԱՐՁԱՆԵՐԻ

ԱՇՎԻՍՆԵՐԻ ԸԱԽԱԿԱՆ ՄԻԴՈՒՆՔՆԵՐԸ

Արագածոտն գավառի Թալին ավանի 7-րդ դարի եկեղեցիների շրջակայթում, 1981 թվականին՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության վարչության կողմից կատարվող վերականգնման աշխատանքների ընթացքում, հնագիտության ինստիտուտի ջոկատը իրականացրեց պեղման աշխատանքներ։

Հայտնի է, որ վաղ միջնադարում Թալինը հանդիսացել է կամսարական նախարարների տոհմական կենտրոններից մեկը։ 7-րդ դարում կամսարական իշխանները Թալինում կառուցել են երկու նշանավոր եկեղեցիներ, որոնց շրջակայթում էլ 1981-ին կատարվել են պեղումներ։

Աստվածածին կամ Փոքր եկեղեցուց 10 մ արևմուտք պեղումներով բացվել է աշխարհիկ կառույց։ Պեղումներով պարզվեց, որ այդ շինությունն ունեցել է կառուցողական երկու շրջան։ Սկզբնական շրջանը, ըստ գտածոների թվագրվում է 10-11-րդ դդ։ Այն ուղղանկյուն հատակագծով 14 × 10 մ չափերի մեջ շինություն է, կառուցված փոքրածավալ կարմիր տուֆ շինաքարով, կրաշաղախով։ Պահպանված պատերի բարձրությունը 1-2 մ է։ Շինությունը կործանվելուց հետո կրկին վերականգնվել է 15-16-րդ դարերում և վերակառուցվելով բաժանվել է տարբեր նշանակության մասերի։ Պեղումներով պարզվել է, որ Փոքր եկեղեցու անմիջական շրջակայթը կառուցապատված էր 15-16-րդ դարերին պատկանող տնտեսական և բնակելի կացարաններով, որոնք կազմում են մեկ ընդհանուր խումբ։ Համանման ուշ միջնադարյան կառույցներ են բացվել նաև կաթոլիկե եկեղեցու շրջակայթում։ Նշված կառույցների հիմքերը դրված են եկեղեցու մուտքի առջևի սալահատակի և ստիլոբատի մակերեսի վրա։ Այս թվագրումը հաստատվում է հայտնաբերված հնագիտական իրերով,

սալահատակի վրա տեղադրված թոնիրներով, տնտեսական հորերով :

Եկեղեցիների շրջակայքում եղած քարե ցանկապատերի հեռացման միջոցին գտնվել են քանդակագարդ քարերի բեկորներ, բազմանիստ սյան մեջ բեկոր, որոնք ակնհայտորեն պատկանում են մեկ այլ եկեղեցական կամ պալատական շինության, որի հետքերը տակավին չեն նշմարվում:

Դեղումների ընթացքում հայտնաբերվել են 7-րդ դարին բնորոշ կղմինդրի ամբողջական նմուշներ, եկեղեցու խոնարհված գմբեթի քարեր, քառակող կոթողների և խաչքարերի բեկորներ: Գտնվել են նաև մեծ քանակությամբ խեցեղեն իրեր, որոնց վաղագույն բեկորները թվագըրվում են 7-րդ դարով: Մեծ քանակ են կազմում 10-12-րդ դարերի ջնարակած խեցեղենը, ապակյա ապարանջանները, աշխատանքային գործիքները, կշռաքարերը: Գտնված հնագիտական նյութերը բնորոշ են Հայաստանի պատմամշակութային զարգացման տեսակետից: Ըրանք բացահայտում են Թալինի պատկերը ու միայն կամսարականների և Բագրատունիների օրոր, այլև 15-16-րդ դարերում, երկրի տնտեսական ու քաղաքական անկման ժամանակամիջոցում, երբ Թալինի նշանավոր ճարտարապետական հուշարձանների տարածքը կառուցապատվում է անշուք բնակարաններով:

Մ. Ե. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հ.Վ. ՄԱԿԱՐՅԱՆ

ՄԻԱԾՅԱՌԱՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻԱԼԻ ԿՆԻՔՆԵՐԻ

Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում պահպահվում է 13-րդ դ. Կիւլիկյան հայկական դրամի դրվագման կնիքներ /գույքամատյանի № 18346/, որը 1970 թ. նվիրաբերել է Հնասեր Հվարդ Կափամաջյանը /ֆարիզ/: Առաջին երեսի կնիքը իրենից չերկայացնում է 70 մմ բարձրությամբ, ,զնդան,, , որը վերևի մասում գրեթե կլոր է, իսկ դեպի ներքև նեղանալով դառնում է հավասարակող քառանկյունի: Կնիքի վերևին մակերեսի կենտրոնում, կլոր փոսիկի մեջ փորագրված է դրամի առաջին երեսի պատկերը, 23 մմ տրամագծով: Մյուս կնիքը 90 մմ երկարություն ունեցող էող է, որի մի ճակատի վրա փորագրված է դրամի երկրորդ երեսի պատկերատիպը /տրամագիծը՝ 22 մմ/: Զողի վերևի ճակատի մուրճի հարվածներից որոշ չփով այլաձեւվել է և լայնացել:

Առաջին երեսի կնիքի դաշտի կենտրոնում, կետավոր կիսաշրջանակի մեջ նկատվում է երկու անձանց պատկերներ, ողջ հասակով: Անկանած, այստեղ փորագրված են Զապելը և Հեթումը, քանի որ ինչպես հայտնի է Կիւլիկիայի հայկական թագավորության դրամների առաջին

երեսի վրա, բացի Զապել-Հեթումի խողարկումների, պատկերված են մի-
այն տիրակալները։ Դրամի կենտրոնով անցնող խաչի մանրամասները
կնիքի վրա նույնպես վատ են պահպանվել, որը դժվարացնում է տարբե-
րակի որոշումը ըստ խաչի ձևերի։ *Խորագրից՝ , , ԿԱՐՈՂՈՒԹԻԾՆ ԱՅ, , ,
պահպանվել են , , , ՈՂՈ••••, տառերը։ Եզրագիծը կետազարդ է։ Երկ-
րորդ երեսի կնիքի դաշտի կենտրոնում, կետազարդ շրջանակի մեջ պատ-
կերված է դեպի ձախ քայլող առյուծ, որի մեջքի վրա կա խաչ։ Խորա-
գրից պահպանվել է հետևյալը՝ ՀԵՇՈՒՐՈՒ ԹԻԱԿՈՒԱՀՈՐ ՀԱՅՈՅՕ։
Այսպիսով, կնիքները պատրաստվել են Հեթում 1-ինի /1226-1270 թի/ /
գահակալության տարիներին և նրանցով դրվագվել են արծաթյա դրամ մի-
ավորները։ Կնիքները պատկանել են Սիս քաղաքի դրամահատարանին։ Ցա-
վոք, մեզ հայտնի չե կնիքները ինչ ճանապարհով և երբ են դուրս
բերվել դրամահատարանից և այլ մանրամասնություններ, ուստի նրանց
հայտնվելը ֆարիզում մեզ համար, ըստ երեսւյթին, այդպես էլ կմնա
որպես առեղծված։

Կնիքները խիստ մաշված են, այդ պատճառով ներկայումս գրեթե
անհնար է Հեթում-Զապելի տասնյակ հարյուրավոր պահպանված դրամնե-
րի շարքում գտնել այդ կնիքներով դրվագված ստույգ Օրինակները։

Կարելի է ենթադրել, որ ներկայացվող կնիքները գործածության
մեջ են եղել նաև դրամահատարանից դուրս բերելուց հետո։

Ինչպես հայտնի է դրամահատության կնիքները հազվագյուտ են և
յուրաքանչյուր նոր հայտնաբերված Օրինակ յուրովի բացահայտում է
դրամագործության որոշակի ժամանակահատվածի պատմությունը։ Եվ այդ
իրողությունը բացատրվում է այն հանգամանքով, որ դրամահատարաննե-
րում կնիքները խիստ հաշվառվում եին և գտնվում հսկողության տակ
/թե գործածվող, թե մաշված կնիքները/։ Ասկայն, երբ այս կամ այն
պատճառով կնիքները դուրս եին գալիս գործածությունից, ապա նրանք
անմիջապես ոչնչացվում եին։

Չնայած կան տեղեկություններ, որ անտիկ դարաշրջանում տաճա-
րական գանձարաններում մյուս արժեքների հետ պետք է պահպեին նաև
դրամների կնիքները։

Այսպիսով, ներկայացվող 13-րդ դարամահատության հայատառ
կնիքները մինչև Օրս միակ հայտնի Օրինակներն են և ունեն բացառիկ
նշանակություն հայկական դրամագիտության ուսումնասիրության համար
ընդհանրապես և Կիլիկիայի հայկական պետության դրամագործության
պատմության համար մասնավորապես։

ՎԱՅՈՒ ՑՈՐԻ ՄՈԶ ԱՎԱԾԻ ՀԵՏԱԿՈՒԶԱԿԱՆ

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՇԱհԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտարշավը 1980-1981 թվականներին հետախուզական բնույթի ուսումնասիրություններ իրականացրեց Վայոց ձոր /Եղեգնաձորի շրջան/ գավառի Մոզ ավանում: Հնավայրը գտնվում է Արփա գետի աջափնյա բարձունքների վրա, Երևան-Ձերմուկ մայրուղու աջ կողմում: Մելիորատիվ աշխատանքներ կատարելու հետևանքով ավանի մեծ մասը ավերվել, վերածվել է խաղողի այգիների: Ավերումից զերծ է մնացել հնավայրի 8 հեկտար տարածությունը:

Հայկական գրավոր աղբյուրներում Մոզը հիշատակվում է 8-րդ դարից՝ Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի եղերական սպանության առթիվ, մանավանդ 735 թ. երկրաշարժի կապակցությամբ /Մովսես Կաղանկատվացի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օբբելյան, Անիթար Այրիվանեցի, Թայսմավուրք/:

1980-1981-ին Մոզ ավանում կատարված հետախուզական պեղումները ցույց են տալիս, որ հնավայրը բնակեցված է եղել վաղ ժամանակներից /բրոնզե դար – միջնադար/:

Հետախուզական պեղումներով Մոզ հնավայրի հարավարևելյան հատվածում բարձրադիր բլուրի վրա, բացվել են բազալտի կոպտատաշ քարերով կառուցված արտաքուստ ուղղանկյուն-քառանկյունի հատագիծ ունեցող թաղակապ եկեղեցու պատերը: Վերջինիս արևմտյան կողմից հարում է բաց գավիթը: Այստեղ հայտնաբերվեցին 10-14-րդ դարերի ամբողջական և բերի հետաքրքիր հուշակոբողներ:

1980-1981-ին պեղվել են ճեղքված բազալտե շինաբարով, ոչ մեծ չափերի շինություններ և հնձան: Հնագիտական գտածոներից գիտական որոշակի արժեք են ներկայացնում հասարակ, դաշտագարդ, ջնարակած խեցեղենի նմուշները, ապակե, բրոնզե ապարանջանների բեկորներն ու ուլունքները, քարե քանդակագարդ աշտանակը, եկեղեցու քարե մանրակերտը:

Ուսումնասիրվել են նաև Մոզի ավերակների հյուսիս-արևմտյան մասում գտնվող միջնադարյան գերեզմանատան գեղաքանդակ հուշակոբողները, որոնք վերաբերում են 13-16-րդ դարերին:

Հնավայրում ընթացիկ տարում նախատեսվող ճավալուն աշխատանքները հնարավորություն կտան ներկայացնելու Մոզի նյութական մշակույթի պատկերը, պարզելու վերջինիս զբաղեցրած տարածքը, գոյության ժամանակագրական սահմաններն ու շերտագրությունը:

ՐՈՎԱԾԴԱԿՈՒՐԸՆ

Հ.Վ. Խանգաղյան, Ա.Յ. Կեորգյան, Վ.Կ. Արմենիրջյան, Քարա-	
շամբի դամբարանաղաշտը	3
Ս.Ա. Եսայան, Օշականի 1981-1982 թթ. պեղումները	4
Ս.Հ. Դևեջյան, Լոռի-Բերդի վալ երկաթեղարյան դամբարանները . .	5
Գ.Ե. Արեցյան, Հնագիտական աղբյուրներում մշակութային և	
էթնիկական փոխազդեցության արտացոլման պրոբլեմը .	6
Լ.Ա. Պետրոսյան, Քեթիի կիկլոպյան ամրոցի պեղումները	8
Ա.Մ. Փիլիպոսյան, Հայաստանում հայտնաբերված „առաջավոր-	
ասիական,, տիպի դաշույններն ու սրերը	9
Օ.Ս. Խոկիկյան, Հետախուզական պեղումներ թումանյանի շրջանի	
օաղկաշատ գյուղում	11
Կ.Վ. Սեղբոսյան, Կումայրի բնակավայրի անվան պատմությունից .	12
Ս.Կ. Հմայակյան, Կուերտ և իվարշա աստվածություններն	
Արարատյան դաշտում և ուրարտա-աքեմենյան	
պաշտամունքային հակամարտության մասին	14
Լ.Ն. Բիյագով, Հետախուզական պեղումներ Մեղրակոր գյուղում .	16
Հ.Ե. Սիմոնյան, Վերին Նավեր դամբարանաղաշտում 1981 թ.	
կատարված դաշտային աշխատանքների արդյունքները .	17
Հ.Ա. Ազիզյան, Զովունի քարայր-կացարանի հնէաբանական նյու-	
թերը	18
Բ.Շ. Առաքելյան, Ժ.Դ. Խաչատրյան, Արտաշատի 1981-1982 թթ.	
պեղումների արդյունքները	19
Գ.Ա. Տիրացյան, Արմավիրի 1981-1982 թթ. պեղումները	21
Ժ.Դ. Խաչատրյան, Գառնիի պեղումները	22
Ի.Ա. Կարապետյան, Կարճաղյուրի պեղումները	24
Գ.Գ. Քոչարյան, Նոր Նյութեր Դվինի հելլենիստական բնակ-	
վայրի վերաբերյալ	25
Ֆ.Ի. Տեր-Մարտիրոսով, Անտիկ Շիրակավանի պեղումները . . .	26
Ա. Դեմիրիսնյան, Ավանի հնավայրը	28
Հ.Վ. Սարգսյան, Հռոմեական կայսրության դարաշրջանում Հա-	
յաստանի դրամական շրջանառության մասին	29
Հ.Ա. Օհանյան, Անտիկ բնակավայր Շամիրամի վալ երկանե-	
դարյան քաղաքատեղիի տարածքում	31
Ա.Կ. Կանեցյան, Հին Ջրափիր 1981 թ. պեղումները	32

Ա. Փալիկյան, Հայաստանի բնակչության հնէամարդաբանական	
բնութագիրը	32
Գ.Հ. Կարախանյան, Հ.Ա. Մելքոնյան, Գորգագործական տեսարան-	
ներ հայկական միջնադարյան պատկերագանդակնե-	
րում	33
Ս.Վ. Հարությունյան, Մարմաշենի 1980-1982 թթ. պեղումների	
արդյունքները	35
Ի.Ա. Մուշեղյան, Համազրություններ դրամագիտական նյութերի՝	
Անի - Դիին	36
Խ.Հ. Վարդանյան, Ա.Ա. Քալանթարյան, Վաղ բյուզանդական	
դրամա-կշռային միավորների նմուշներ Դիինի	
պեղումներից	38
Գ.Մ. Գրիգորյան, Ըորաճայտ վկայություններ հայութուսական	
պատմական կապերի մասին	40
Հ.Լ. Ռետրոսյան, Գառնիի պեղումներից հայտնաբերված չի-	
նական խեցեղենը	41
Ա.Գ. Ամսեյան, Արգիշտիենի լիի միջնադարյան խեցեղենը . . .	42
Ա.Ա. Քալանթարյան, Կ.Կ. Ղաֆաղարյան, Հ.Գ. Հակոբյան,	
Ֆ.Ա. Բաբայան, Ա.Ա. Ժամկոչյան, Հ.Մ. Ջանփոլադյան, Դիինի	
պեղումների հիմնական արդյունքները	43
Ա. Տեր-Մինասյան, Թալինի, Շենավանի և Միրաֆի վաղ միջնա-	
դարյան սրաճավոր եկեղեցիները	45
Գ.Գ. Սարգսյան, Թեղենյաց վանքի 1982 թ. պեղումները . . .	46
Ե.Ա. Ասատրյան, Թալինի միջնադարյան հուշարձանների պե-	
ղումների նախնական արդյունքները	48
Մ.Ե. Կարապետյան, Հ.Վ. Սարգսյան, Միջնադարյան հայկական	
դրամի կնիքներ	49
Գ.Հ. Կարախանյան, Հ.Ա. Մելքոնյան, Վայոց ձորի Մոզ ավանի	
հետախուզական պեղումների նախնական ար-	
դյունքները	51




Վֆ 06757

Պատվեր 176

Ծպաքանակ 150

Հանձնված է արտադրության 28.02.1983 թ., ստորագրված է
տպագրության 28.02.1983 թ., տպագր. 3,37 մամուլ 3,13
պայմ. մամուլ, հրատ. 2,8 մամուլ, թուղթ թ 1 60 x 84¹/₁₆
Անվեր:

Հայկական Սլյէ Կյ հրատարակչություն ՀՀ միաժնի տպարան





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0227098

[154.]

A i
69994

-26610